

## Խմբագրական

### Ո՞ՒՐ Կ'ԵՐԹԱՅ ՀԱՅ ԿԻՆԸ



Ամեն տարի, Մարտի 8-ին՝ քաղաքակիրթ աշխարհը կը տօնակատարէ Կանանց Միջազգային Օրը, մեծարելով կինը, լուսարձակի տակ առնելով կանանց իրաւունքներու հարցը եւ արժեւորելով անոնց տեղն ու դերը մարդկային հասարակութեան մէջ ընդհանրապէս: Դժուար է ըսել, սակայն, թէ կիներէն քանիներ կը փորձեն վերամտածել իրենք զիրենք, հարցադրել թէ ի՞նչ է իրենց էական դերն ու կոչումը մարդկային ընկերութեան մէջ, ի՞նչ են իրենց իրաւունքներն ու պարտաւորութիւնները:

Ո՞վ է կինը վերջապէս եւ, մեր պարագային, ո՞վ է հայ կինը:

Վաղուց ըսուած է, թէ «Կինը ազգի մը սիրտն է»: Այսինքն, անոր տեղն ու դերը որոշադրիչ են ազգի ու ժողովուրդի մը համար, քանզի կինն է առաջին դաստիարակը մարդուն, ծնուցիչն ու սնուցիչը մարդ-անհատին ֆիզիքական թէ հոգեբարոյական կազմաւորումին:

Կինն է, որ՝ ինչպէս սիրտը մարմինն մէջ, կենարար աւիւն ու աւիշ կը ներարկէ հաւաքականութեան մը, ազգի մը մարմինն, պայմանաւորելով անոր ուժականութիւնը: Զետեւաբար, որքան առողջ բաբախէ այդ սիրտը, այնքան առողջ կ'ընծայուի հասարակութեան ու ազգի կեանքը: Նոյն տրամաբանութեամբ ալ, որքան լաւ դաստիարակուած ըլլայ կինը, այնքան խոստումնալից կը դառնայ հաւաքական յառաջդիմութեան հեռանկարը: Ի զուր չէ ըսուած, թէ՛ «Մայրերու ափին մէջ պիտի փնտռել ազգերու ապագան»: Անմիջապէս աւելցնելու ենք, սակայն, որ «դաստիարակուած ըլլալ» չի նշանակեր անպայմանօրէն բարձրագոյն ուսման վկայական ստացած կամ գիտելիքներ ամբարած ըլլալ: Դաստիարակութեան հիմնաքարը ինքնաճանաչումն է, ինքնագիտակցութիւնը եւ պատասխանատուութեան ու արժանապատուութեան ոգին:

Մեր ժողովուրդը շատ բարձր գնահատած ու արժեւորած է հայ կնոջ, հայ մօր կոչումը՝ ոչ միայն ընտանիքէն ներս, այլ առհասարակ հայ կեանքին մէջ: Վկայ՝ ան իր հայրենիքը կոչած է Մայր Զայրենիք, իր Մեծաքանչ լեզուն՝ Մայրենի Լեզու, Մայր Զայաստանը ներկայացուցած է վեհաշուք մօր կերպարով՝ սուր ի ձեռին, քանզի ան միշտ ալ հաւատացած է, որ մայրն է որ ծնունդ եւ սնունդ կու տայ ազգին, կը դաստիարակէ զայն, անխաթար կը պահէ ու կը պաշտպանէ սերունդէ-սերունդ ազգային մեր արժեքներն ու սրբութիւնները, ազգային ինքնութիւնն ու ոգին...հայրենեաց հողը սրբազան...: «Մայ՛ր, դարեր, սուրբ է եղեր Քեզ համար գիր ու օճախ, Դու քո շունչով ես պահեր Մեր հին ոգին կենդանի», պիտի ըսեր Սիլվա Կապուտիկեան, իր թեւաւոր խօսքով...:



Հայուհին է որ դաստիարակած ու ոգեշնչած է Վարդանանց պանծալի սերունդը, անձնուրացութեամբ յանձն առած է ամէն դժուարութիւն ու զրկանք, որպէս «Փափկասուն Տիկնայք Հայոց աշխարհի»: Հայրենակերտումի սրբազան աշխատանքին՝ հայուհին բերած է իր սրտանուէր մասնակցութիւնը, ստեղծելով ու ծաղկեցնելով ձեռագիր մատեններ, նախաձեռնելով՝ բազում վանքերու թէ ճարտարապետական կոթողներու կառուցման վսեմ գործը: Աւելին, հայուհին դարձած է գործօն մասնակիցը հայ ազգային-ազատագրական պայքարին: Արդարեւ, 19-րդ դարի վերջին քառորդին, անուանի կանանց նախաձեռնութեամբ, ինչպիսիք են Չապէլ Եսայեան, Սրբուհի Տիւսաբ, Չապէլ Ասատուր, Արշակունի Թեոդիկ եւ ուրիշներ, հիմնուեցան «Ազգանուէր հայուհեաց Միութիւնը», «Դպրոցասէր տիկնանց ընկերութիւնը» եւ այլ կազմակերպութիւններ, ուր ազգային դաստիարակութեան սերմերը շուտով ծլարձակեցան՝ Սասունի, Չէլթունի, Վանի եւ այլ հերոսամարտերու ընթացքին, ուր շատ մը կին հայդուկներ փայլեցան իրենց խիզախութեամբ եւ հերոսական ոգիով, հայոց պատմութեան տալով Սօսէի եւ Շաքէի նման տիպարներ:

Եղեռնի գեհեՆային օրերուն, հայ մայրն էր դարձեալ, որ՝ որպէս հաւատարիմ կրողը հայ ոգին, Տէր-Չօրի անապատի աւազներուն վրայ դրոշմեց Հայոց Այբուբենը եւ զայն յանձնեց գալիք սերունդներուն, որպէս հայ ընկերութեան հիմնաքար ու գերագոյն արժէք, ազգի փրկութեան երաշխիք: Իսկ յետ-Եղեռնեան հայրենագուրկ պայմաններու տակ, տարագիր հայուհին եղաւ յառաջամարտիկը հայապահպանման եւ հայակերտումի մեր բոլորանուէր ճիգերուն...

Ո՞ր է, սակայն, հայ կինը, հայուհին այսօր:

Մեր ժամանակներու սպառողական եւ նիւթապաշտ հասարակութեան դրուածքը եւ համաշխարհայնացման ահեղ յորձանքը կը սպառնան տրորել ու խեղդամահ ընել հոգեւոր ու բարոյական արժէքներ, ազգային դիմագիծ ու ազգային ոգի, պատմութիւն ու մշակոյթ: Համատարած երեւոյթ դարձեր են ընչաքաղց, քաղքենիական ու հաճոյամոլ կենցաղը, «ո՛ր հաց, հո՛ն կաց»ի գործնապաշտ կենսափիլիսոփայութիւնը, օտարամոլութեան վարակը, որոնք բարոյական-գաղափարական տագնապ ու ճգնաժամ կը ստեղծեն քիչ մը ամէնուր՝ ազգային մեր կեանքին մէջ:

Այսօր, սերունդներու իրաւ դաստիարակութեան եւ ի մասնաւորի հայեցի դաստիարակութեան հիմնական տագնապ կայ, երբ տակաւ կը շատնայ թիւը այն մայրերուն, որոնք իրենց զաւակները կը դաստիարակեն գերազանցօրէն գործնապաշտ մտահոգութիւններով..., հայ դպրոցն ու հայերէնը նկատելով անշահաբեր եւ ոչ էական՝ կեանքի մէջ յաջողութիւն եւ դիրք ձեռքբերելու համար:

Սարսափազդու պիտի ըլլար երեւակայել թէ ի՞նչ կրնայ ըլլալ, եթէ նման վերաբերմունքը դառնայ ընդհանրական..., եթէ ունենանք հոգեւոր-ազգային արժէքներէ պարպուած, գաղափարազուրկ



սերունդ մը, զոր կարելի պիտի ըլլար գնել երեսուն խեղճ արծաթով..: Նման անձերէ կազմուած պետութիւնն ու հայրենիքն անգամ կարելի պիտի ըլլար դիւրաւ գրաւել դրամով, առանց զէնք ու թնդանօթի, առանց կռիւ ու պատերազմի...: Եւ տարակոյսէ վեր է, որ ազգային-բարոյական-մշակութային արժէքներու եւ գաղափարականի հէնքն է, որ կրնայ ստեղծել հզօրագոյն դիմադրականութիւնը, եւ որոնց առաջին եւ գերագոյն սերմանողն է հայ մայրը:

Այսօր, առաւել քան երբե՛ք, այժմեական եւ հրատապ կը հնչէ Միքայէլ Նալպանտեանի խորհմաստ պատգամը.- «Հայ կինը պէտք է հայութիւն հագնի, ու իր կարծով եւ բարոյական սնունդով սնուցանի իր երեխաներին եւ նրանց սրտում ցրի ազգութեան սերմը»:

Հոգեբարոյական ճգնաժամի, ազգերու համահարթեցման եւ գաղափարագրերկ մեր ժամանակներուն, այս պատգամին խորագոյն ըմբռնումով եւ գիտակցութեամբ՝ հայուհին պարտի վերարժեւորել եւ նոր ընթացք տալ ազգակերտումի իր ճակատագրական առաքելութեան ու կոչումին:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ



## Կիպրահայ

### ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔ «ԱԶԱՏ ԽՕՍՔ»ԻՆ

(Անոր լոյս ընծայման 100-րդ թիւին առիթով)



ԱԶԱՏ ԽՕՍՔ-ի հարիւրերորդ համարի լոյս ընծայումը հանգրուան մըն է, որ կը թելադրէ պահ մը անդրադառնալ անցած ուղիին, իմաստաւորել եւ արժեւորել զայն, նորոգ ուժականութեամբ շարունակելու համար ճամբան:

Մարտ 2011-ին ծնունդ առաւ Ազատ Խօսք-ը եւ կանոնաւոր եւ անխափան շարունակականութեամբ լոյսին ընծայեց իր հարիւր թիւերը, ամսական հերթականութեամբ..., միշտ հաւատարիմ մնալով իր ստանձնած առաքելութեան, որուն մասին կը

կարդանք իր «Առաքելութիւն» բաժնին մէջ, ուր յատկապէս կ'ըսուի. «Ազատ Խօսքի ծննդոցով, մենք կ'առաջարկենք այս բեմը դարձնել վերկուսակցական, համահայկական մտածողութեամբ շնչող բեմ, դուրս ելլելով ազատ միտքը կաշկանդող եւ բռնադատող նախապաշարումներէ եւ կարծրատիպերէ, հատուածամոլ նկատառումներէ, տեղայնական գաւառամտութենէ...»:

ՀԱՐԻԻՐ ԹԻԲԵՐ...որոնք կարելի անաչառութեամբ եղան հայելին հայ կեանքին, համահայկական ոգիով, քարացած կարծրատիպերէ ձերբազատ...

ՀԱՐԻԻՐ ԹԻԲԵՐ...որոնք ոչ միայն հարազատօրէն ցոլացուցին հայ կեանքը յուզող խնդիրները, այլեւ ու մանաւանդ մեր հայեացքը յառած պահեցին՝ ամբողջական Հայ ժողովուրդի եւ ամբողջական Հայոց աշխարհի տեսլականին, մեր Պահանջատիրական եւ ազգային-ազատագրական երթին, ազգային-հոգեւոր բարոյական արժեհամակարգին, ազատ, արդար եւ արժանապատիւ երկրի կերտումին, Հայաստան-Սփիւռք իմաստուն, նպատակասլաց եւ անկեղծ համագործակցութեան վրայ...: Տակաւին, մեր ուշադրութեան սեւեռակէտը պահեցին՝ տարանջատ, կոտորակուած եւ մասնատուած հայ ժողովուրդի ներուժի մէկտեղումին եւ արդիւնաւորումին վրայ...: Եւ վերջապէս, Ազատ Խօսքը ջատագովը մնաց եւ կը մնայ մեր դարաւոր ինքնութիւնը արտայայտող հայ մշակոյթին եւ հազարազանձ հայոց լեզուին, մասնաւորաբար անոր առաւել վտանգուած ճիւղին՝ արեւմտահայերէնին, որ տարագիր արեւմտահայութեան տոհմիկ լեզուն է, անոր բռնագրաւուած հայրենիքին ոգեղէն բովանդակութիւնը:

Ազատ Խօսքը հաւատաց եւ կը հաւատայ որ մամուլին վերապահուած է՝ ժողովուրդը դաստիարակելու մեծագոյն դերակատարում մը: Որքան ճիշդ է ըսուած. «Առօրեայ անհամ անցքերի ու դէպքերի նկարագրութիւնը հրապարակախօսութիւն չէ: Խօսքի լուսանկարչութիւն չպիտի լինի մամուլը...(Գարեգին Նժդեհ)»: Մամուլը պարտի դառնալ իր ժողովուրդի հոգեւոր, բարոյական եւ մտաւոր հայելին: Անոր մարդկային եւ ազգային ինքնաճանաչման եւ



ինքնագիտակցութեան արթնացման բեմը....Ազգային գաղափարախօսութիւն մշակելու ամպիոնը: Այսպիսին եղաւ ուղեգիծը Ազատ Խօսքի:

Այսուհետեւ եւս, Ազատ Խօսքը խոնարհաբար կը միտի դառնալու խղճի ձայնը մեր ժողովուրդին, ստրկամտութեան, անարդարութեան եւ անտարբերութեան թմբիրին դէմ աղաղակող անլռելի զանգակատունը, ճշմարտութեան փնտռութիւն միտող վճիտ, մաքուր, անկեղծ ու սրտազին խօսքը....Ժողովուրդին, ազգին արժանապատուութեան ցերմ, համարձակախօս պաշտպանը...

ճշմարիտն ու արդարը, ազգային ինքնաճանաչումն ու ինքնագիտակցութիւնը, պատմութեան շունչն ու ոգին, ազգային մեր իրաւապահանջութիւնը, Հայաստանի հանրապետութեան հզօրացումը ազատագրուած Արցախի հետ միասին, Հայաստան-Սփիւռք կապերու հզօրացումն ու արդիւնաւորումը...: Ասոնք առանցքն են Ազատ Խօսք-ի դաւանած սկզբունքներուն գերազանցօրէն: Մեզի ներկայիս անչափ կենսական են՝ «օդի, ջուրի, հացի նման», հոգեկան յեղափոխութիւնը, մտայնութեան յեղափոխութիւնը, ազգային բուն արմատներուն վերադարձը, համահայկական մտածողութիւնն ու ոգին, սթափ միտքն ու կամքը..., ընթերցողներուն հետ անկեղծ հաղորդակցութիւն ստեղծելով: Ա՛յս է Ազատ Խօսքի գլխաւոր միտք բանին:

Այս ուղղութեամբ ալ, Ազատ Խօսքը միշտ տեղ տուաւ եւ պիտի տայ՝ տարբեր հատուածներ ու հոսանքներ ներկայացնող, ինչպէս նաեւ անկուսակցական եւ ամբողջովին անկախ հրապարակագիրներու, միշտ հաւատալով որ բազմակարծութիւնը կը նպաստէ գաղափարներու աճումին ու հարստացման, իրարհանդուրժողութեան մթնոլորտի գոյացման, քանզի ոչ մէկը կրնայ յաւակնիլ բացարձակատէրը ըլլալ ճշմարտութեան:

Հեզասահ եւ հեշտ ու դիւրին չեղաւ անշուշտ Ազատ Խօսքի անցած ուղին, քանզի ան անհատական նախաձեռնութիւն է եւ չունի զօրավիզը միութեան մը, կազմակերպութեան մը, թէ կուսակցութեան մը....:

Նմանապէս, զերծ չեղաւ ան թերացումներէ կամ բացթողումներէ, վստահաբար, ինչպէս է պարագան մարդկային ամէն ձեռնարկի եւ գործունէութեան:

«Ամբողջովին միակ»ի վճռակամութեամբ հանդէս գալը կ'ենթադրէ խիզախութիւն, յանդգնութիւն, առաւել եւ առաւել պատասխանատուութեան գիտակցութիւն, յանձնառութիւն....նիւթաբարոյական ծանր բեռը շալկելու պատրաստակամութիւն եւ արժանապատուութիւն:

Այսօր, առաւել քան երբե՛ք, զինուած մեր ընթերցողներու քաջալեր կեցուածքով, յանձնառու ենք շարունակելու մեր երթը, հաւատալով որ Ազատ Խօսքի սփռած նշոյլ մը լոյսն անգամ կը նպաստէ հայ կեանքի լուսաւորման, ճառագայթման, յառաջընթացին...

ԱԶԱՏ ԽՕՍՔ-ը՝ հայ իրականութեան մէջ, նշոյլ մը ճառագայթ ըլլալու պատուաբեր պատասխանատուութիւնը կը վերստանձնէ այս կարեւոր հանգրուանին եւ՝ նորոգ հաւատքով ու յանձնառութեամբ, կը շարունակէ իր երթը...Աստուած մեզ պահապան:



Արտօնատէր եւ Խմբագիր՝

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՆԻԿՈՍԻԱ-ԿԻՂՐՈՍ

## Յօդուածներ

ԷՋ ՄԸ ԼՈՋԱՆԷՆ...

### ԱՀԱՐՈՆ ՇԽԻՐՏԸՄԵԱՆ - ՊԱՅՔԱՐ 162



Վերջին ժամանակաշրջանին, թրքական դիւանագիտութեան սպառողական դրամագլուխներէն մէկը դարձած է Խրիմի, Սուրիոյ եւ Իրաքի հիւսիսը գտնուող ծագումով թուրք ցեղերու անվտանգութիւնը: Երտողան, յաճախ, իբրեւ իրաւագուրկ, ճշուած ժողովուրդներու իրաւունքներուն ախոյեան հանդէս կու գայ միջազգային բեմերէն:

Փոքրամասնութիւններու իրաւունքներով Նախանձախնդիր անձնաւորութենէ մը պիտի ակնկալուէր, որ տարագիր հայ ժողովուրդի զաւակներուն հայրենի հողերը վերադառնալու իրաւունքը պաշտպանելով ապացուցէր իր մարդասիրութիւնը...:

Օսմանեան կայսրութեան պատմութիւնը դրացի եւ օտար ժողովուրդներու նկատմամբ հաւաքական վայրագութեան տխուր յիշատակարան մըն է պարզապէս: Առ այսօր կը շարունակուի թուրք պետականութեան եւ անոր կողմէ ճշուած հայ, քիւրտ, յոյն, ասորի, եգիտի ժողովուրդներու միջեւ մահ ու կենաց պայքարը:

Համայն աշխարհի գիտէ հայ ժողովուրդին հանդէպ Թուրքիոյ բարբարոսութիւնները: Համայն աշխարհի գիտէ՝ սփիւռքահայութիւնը կը պայքարի ձեռք բերելու իր կորսնցուցած իրաւունքները:

Թրքական յաջորդական կառավարութիւններ կ'ոտնակոխեն ճշմարտութիւնը եւ կը կեղծեն պատմութիւնը:

Թուրք պետականութիւնը ուշ կամ կանուխ հաշուի պիտի Նստի Արեւմտահայաստանի իսկական տերերուն հետ: Սփիւռքահայութիւնը անպայմանօրէն գործնական օրակարգի պիտի վերածէ բռնագրաւուած հողերը վերստանալու պահանջատիրութիւնը: Եթէ հայը ապահով անկիւն կը փնտռէր ժամանակին, հարիւրամեակ մը անցած է այդ ծանր օրերէն: Փոխուած են պայմանները, փոխուած են հոգեբանութիւնները: Սփիւռքահայութիւնը այսօր տարբեր աչքերով կը դիտէ մեր պահանջատիրութիւնը: Իւրաքանչիւր ժողովուրդի իրաւունքն է մնալ իր պապենական հողերուն վրայ:

Ժամանակն է թուրք պետականութեան յիշեցնելու իր պարտքը վճարելու անհրաժեշտութիւնը, փոխհատուցել հայ ժողովուրդին կորուստները:

Մարդկային իրաւունքներէն բարձրաձայն ճառող Արեւմուտքի ղեկավարներէն գործնական քայլեր կը պահանջուին այսուհետեւ: Աշխարհի տարբեր ափերուն վրայ ապրող հայերուն արդար իրաւունքն է վերադառնալ կորուսեալ հայրենիքը: Այս օրակարգը նոր չէ Արեւմուտքի



դիւանագետներուն: Ան բազմակողմանիօրէն քննարկուած է Լոզանի խորհրդաժողովի ընթացքին:

Լոզանի խորհրդաժողովը, միջազգային իրաւունքի հիման վրայ յենելով, հարցականի տակ առաւ ժողովուրդի մը կողմէ (թուրք) հարիւր հազարաւոր սեփական հպատակներ (հայ) արտաքսելու իրաւասութեան հարցը եւ պահանջեց հայ տարագիրներուն վերադարձը իրենց հայրենական հողերը:

Լոզանին մասնակցող Դաշնակից պետութիւնները յայտարարեցին, թէ խորհրդաժողովը պիտի չփակուի առանց արդար լուծում մը տալու Հայկական հարցին: Խորհրդաժողովին դիտորդի հանգամանքով կը մասնակցէին Հայաստանի հանրապետութեան ներկայացուցիչ Աւետիս Ահարոնեանը եւ Ազգային պատուիրակութեան ներկայացուցիչ Գաբրիէլ Նորատունկեանը:

Մեր երկու պատուիրակութիւնները Հայկական հարցի լուծման համար խորհրդաժողովին ներկայացուցած էին լուծումի երեք տարբերակ.

Ա- «Հայկական Օճախ»ի ստեղծում, Մ. Նահանգներու Նախագահ Վուտրօ Ուիլսոնի կողմէ գծուած սահմաններուն մէջ:

Բ- «Երեւանեան Հանրապետութեան» տարածքին ընդլայնում դէպի ծով ելքով եւ այդ տարածքներուն մէջ գաղթականներու բնակեցում:

Գ-«Հայկական Օճախ»ի ստեղծում Կիլիկիոյ մէջ:

Ազգային փոքրամասնութիւններու օրակարգը քննարկելու միջոցին քանի մը անգամ անդրադարձ եղաւ հայկական ազգային օճախի գաղափարը: Բրիտանիոյ արտաքին գործոց Նախարար Լորտ Քերզըն, Թուրքիոյ մէջ փոքրամասնութիւններուն պաշտպանութեան հարցը արծարծելով, շեշտեց, թէ հայերը արժանի էին յատուկ ուշադրութեան... եւ պահանջեց Թուրքիոյ հիւսիսարեւելեան Նահանգներուն կամ Կիլիկիոյ եւ Սուրիոյ հարաւարեւելեան սահմանագիծին վրայ ազգային օճախ մը ստեղծել հայերուն:

Մարդասիրական ճառեր արտասանեցին նաեւ Դաշնակից մնացեալ պետութիւններու ներկայացուցիչները: Թուրքիոյ պատուիրակութեան ղեկավար, վարչապետ Իսմէթ Ինենիու կտրականապէս մերժեց Թուրքիոյ տարածքին որեւէ հայկական պետութիւն ստեղծելու գաղափարը, պատճառաբանելով, թէ երկրին բոլոր տարածաշրջաններուն մէջ թուրքերը մեծամասնութիւն ըլլալով, անհնար է որեւէ տարածութիւն անջատել մայր հայրենիքէն: Բացի այդ, Թուրքիա «բարիդրացիական յարաբերութիւններ» հաստատած է գոյութիւն ունեցող «անկախ Հայաստան»ի հետ (խօսքը կը վերաբերի Մոսկուայի եւ Կարսի համաձայնագիրներուն), այսինքն՝ խորհրդային Հայաստանի հետ, հետեւաբար անհնար պիտի ըլլար պատկերացնել այլ Հայաստանի մը գոյութիւնը...

Իսմէթ Ինենիու սինիզմով յայտարարեց .« Թող հայերը այլուր փնտռեն իրենց հայրենիքը, ամենայարմար վայրը անոնց համար քիչ բնակեցուած Աւստրալիան է»:

Այստեղ փակագիծ մը բանալով կարելի է ընթերցողին ուշադրութեան յանձնել, թէ հակառակ Կարսի եւ Մոսկուայի համաձայնագիրներուն, Լոզանի խորհրդաժողովը ոչ մէկ յիշատակութիւն կատարեց Թուրքիոյ եւ Հայաստանի սահմանագիծին:





Լոզանի խորհրդաժողովը հաստատեց Պուլկարիոյ, Յունաստանի, Իրաքի, Սուրիոյ հետ Թուրքիոյ սահմանները, առանց անդրադառնալու հայ-թրքական սահմանին, որովհետեւ անոնք որոշուած էին Մ. Նահանգներու նախագահ Վուտրօ Ուիլյսոնի իրաւարար վճիռով:

Պատմական ինչպիսի հեգնանք. առարկելով հանդերձ հայերու տունդարձին եւ հայկական օճախ ստեղծելու գաղափարին, միեւնոյն Ինենիօն՝ Լոզանի խորհրդաժողովի հողային յանձնաժողովի նիստերէն մէկուն ընթացքին յայտարարեց.« Ինչ կը վերաբերի ներկայիս Թուրքիոյ մէջ գտնուող հայերուն, ոչինչ կը խանգարէ անոնց, իբրեւ փոքրամասնութիւն շարունակելու ապրիլ աշխատանքային եւ բարեկեցիկ կեանքով, ինչպէս նախապէս եղած է, մինչեւ պատերազմը»: Լորտ Քերզըն անմիջապէս ծաղրեց թուրք Ինենիօն, հարցնելով.« Եթէ երկու ժողովուրդներուն միջեւ գոյութիւն ունեցած է երջանիկ յարաբերութիւններ, հապա ինչպէ՞ս պատահեցաւ, որ Փոքր Ասիոյ մէջ ապրող երեք միլիոն հայերուն թիւը նուազելով 130 հազարի հասաւ»: Շարունակելով իր հարցադրումը, անգլիացի դիւանագետը հարցուց.« Ինչո՞ւ տեղահանութեան պատճառով ներկայիս հարիւր հազարաւոր հայեր ցրուած են աշխարհի տարբեր անկիւններու մէջ, այն պահուն, երբ անոնք պէտք է հետեւէին թրքական կառավարութեան սիրալիր իրաւերին: Վերջապէս, ինչո՞ւ Հայկական հարցը կը հանդիսանայ աշխարհի ամենամեծ խայտառակութիւններէն մէկը»:

Լոզանի համաձայնագրի օրերուն հայերը Անաթոլիա վերադարձնելու տրամադրութիւն մը գոյութիւն ունէր...:

Թուրքիան՝ օսմանեան ըլլայ ան, երիտթրքական, գիւտուրական կամ հանրապետական միեւնոյնն է, Թուրքիոյ մէջ գոյութիւն չեն ունեցած «հայրենակից թուրքերու հետ եղբայրաբար ապրելու պայմաններ...»:

Բանավեճերու ընթացքին, Նոյնիքն Իսմէթ Ինենիօն առանց որեւէ պատասխանատուութիւն ստանձնելու հայերու մասին յայտարարեց, թէ «խաղաղ անհատները կրնան ազատ վերադառնալ Թուրքիա»: Լոզանը առանց երաշխաւորութեան տունդարձի իրաւունք սահմանեց հայրենագուրկ հայ ժողովուրդին...

Լոզանի խորհրդաժողովը ոչ մէկ բառ յիշատակեց Հայկական հարցին մասին: Հետագային Լոյտ ճորճ իր յուշերուն մէջ գրեց .« Հայաստանը մեր զոհն էր»:

Թուրք պետականութիւնը կ'անտեսէ Լոզանի համաձայնութեան դրոյթները, որոնց տակ դրուած է թուրք ներկայացուցիչներու ստորագրութիւնը:

Առաջին համաշխարհային պատերազմէն ետք, երբ թուրքերը նկատեցին հակասութիւններու մէջ մխրճուած Արեւմուտքին վերիվայրումները, երբ կատարուած ոճրագործութիւնները հետեւողականօրէն չեն դատապարտուիր, մեղաւորները չեն պատժուիր, թուրքերը սկսան ամենուրեք տարածել. «Մենք անելի քան մէկ միլիոն հայ կոտորած ենք եւ Եւրոպան ոչինչ կ'ըսէ մեզ պատժելու համար, եւ երբ որ Նոր աշիթ մը ունենաք, մենք վերջ կու տանք մնացեալ հայերուն եւ երկիրը մեզի կը մնայ ( Գրիգորեան Հ.Գ. The Mandate for Armenia, Պոլիս, էջ. 11, 1919):

Այս տողերը կը գրեմ, որովհետեւ ժամանակն է թրքական իշխանութիւններուն յիշեցնել պապենական հողերու վրայ ապրելու տարրական իրաւունքը: Հայ ժողովուրդի զաւակները պէտք է փաստերու իմացութեան վրայ յենած գործուն կերպով հատուցում պահանջեն



---

ցեղասպանէն: Պայթարիլ, որպէսզի Թուրքիա ճանչնայ Ցեղասպանութիւնը,  
Արեւմտահայութեան իրաւունքները:

## Յօդուածներ

### ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

#### ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ՃԵՊԵՃԵԱՆ



«Ես թուրքիացի եմ, քաղաքացին թուրքիոյ Հանրապետութեան: Երկրորդ՝ հայ եմ: Առաւել եւս, թուրքիոյ հայ հաւաքականութեան մէկ մասնիկը ըլլալով հանդերձ, միաժամանակ Հայաստանի եւ աշխարհատարած հայկական սփիւռքին բարոյական մէկ մասնիկն եմ, անոնց ցեղակիցն

եմ»:

#### ՀՐԱՆԴ ՏԻՆԸ

Պատմութիւնը հայունն է: Այս պարագային՝ թուրքիոյ հայուն, եւ երեւի՝ պոլսահայ իրականութեան: Եւ ասիկա հայուն հարուստ պատմութիւններէն մէկն է՝ նկատի ունենալով, որ հայկական Պոլիսը որքա՛ն մեծ աւանդ ստեղծած է հայկական գրական, մշակութային, կրթական եւ ազգային ժառանգութեան մէջ:

Պոլիս, 12-17 Յունուար 2020: Հայկական Պոլիսը այնքան «լեցուն» է, որ ծանծրանալու ժամանակ չկայ: Ի՛նչ խօսք, որ նոյնքան նաեւ կարելի չէ յագեցնալ անկէ: Անկախ՝ թէ որքա՛ն յաճախականութեամբ է, որ այցելած ես այդտեղ, բայց միշտ «հարստութիւն» մը կայ հոն եւ հայկական շունչ, որ պիտի ուզես տեսնել եւ ընկալել:

Բերայի հայ աւետարանական եկեղեցին առաջին հայ աւետարանական եկեղեցին է, որ հիմնուեցաւ նոյն շարժումի ստեղծումէն անմիջապէս ետք՝ Յուլիս 1846-ին, Պոլիս: Եկեղեցին կը պահէ իր հին եւ երբեմնի կառոյցը, ինչպէս որ հիմնուած էր: Այս իմաստով, կ'ապրիս պատմութիւնը իր ամբողջութեան մէջ: Եկեղեցի յաճախող հաւատացեալներուն թիւը նուազած է գաղթի ու ճամբորդութիւններու պատճառով, բայց կայ տակաւին առաքելութեան կառչելու յանձնառութիւնը: Սոնա Եօզբենյալ եկեղեցւոյ քարոզիչն է: Եթէ պաշտամունքը երկլեզու է՝ հայերէն եւ թուրքերէն, բայց, ի՛նչ խօսք, որ հոգին հոն է... հայութեան մէջ: Ունին կարօտը հաղորդակցութեան, եւ ի մասնաւորի՝ դուրսի գաղութներուն հետ: Կրնայի տեսնել, թէ իմ այցելութիւնս քաջալերանք է, բայց նաեւ՝ կորով տալու փորձ, որ իրենք միւսակ չեն:

Հրանդ Տինքի «Յիշատակի տունը» եւ իր «Ակօս» թերթի նախկին գրասենեակին մէջ զգացական, բայց նաեւ վաւերական պատմութիւն է: Արդէն շէնքի մուտքին՝ գետինը, կայ յիշատակի գրութիւն մը, թէ՛ «Այստեղ սպաննուեցաւ Հրանդ Տինքը»: Եւ իւրաքանչիւր նկար, խօսք, գրութիւն եւ վաւերագրական ժապաւէն՝ Հրանդ Տինքի մասին, պատմութիւնն է հայուն, որ պայքարած է իր ինքնութեան եւ արժանահաւատութեան համար: Հրանդ կը գիտակցի, որ



երկրին քաղաքացին է՝ «քաղաքացին Թուրքիոյ Հանրապետութեան», բայց գիտե՛ նաեւ, որ ինք « հայ է»: Այն հայը, որ անջատուած չէ իր հայրենիքէն եւ ո՛չ ալ իր ցեղակիցներէն, որոնք աշխարհով մէկ տարածուած են: «Միաժամանակ Հայաստանի եւ աշխարհատարած սփիւռքի բարոյական մէկ մասնիկն եմ, անոնց ցեղակիցը»:

Դարձեալ կը մտածես: Հայ ենք՝ տարածուած աշխարհով մէկ: Եւ այս ալ մեր պատմութեան պարտադրած իրավիճակն է: Տարբեր ենք եւ եղանք, բայց օտար չենք, որովհետեւ մեր հայկական ինքնութիւնը մեզ վերածած է «մէկ մասնիկ»-ի: «Ցեղակից»-ի:

Կեդրոնական վարժարանին մէջ եմ: Կրթական օճախ մը, որ պատրաստած է հայ ժողովուրդի մտաւորական, գրող, մանկավարժ եւ ազգային ու հասարակական շատ մը գործիչներ: Չուշացաւ իմ փափաքս՝ յայտնելու տնօրէն Սիլվա Գույումճեան-Մարկոսեանին, որ դարձեալ կ'ուզեմ տեսնել դպրոցին սրահը: Հոն են մեր բոլոր «մեծերը»: Իրենց նկարներով: Բայց նաեւ հոն են անոնց հոգին ու շունչը, որոնք ապրած են ու տակաւին կ'ապրեցնեն: Ինչպէս նաեւ՝ մշակութային-գրական այն մեծ ժառանգութիւնը, որ ձգեցին մեզի՝ իւրաքանչիւր հայուն: Երուխանը, Միսաք Մեծարեւոյցը, Արամ Հայկազը, Արշակ Չօպանեանը՝ բոլորը... Բայց սրահին անկիւնը մասունքի մը նման պահուած է Կոմիտաս վարդապետին դաշնակը: «Մեծ հանդիսութեամբ յիշատակեցինք Կոմիտասի ծննդեան 150-ամեակը», ըսաւ Սիլվան:

Նաթալի Պաղտատը, Տիանա Պուլտուքը եւ Մուրադ Սարանկիլը Կեդրոնական վարժարանին մէջ հայերէնի ուսուցիչներն են: Երեքն ալ՝ երիտասարդ հայորդիներ, որոնք մեծագոյն նուիրուածութեամբ կը սորվեցնեն մայրենին: Քաջալերական էր տեսնել, որ երիտասարդ ուժեր ստանձնած են մայրենիով դաստիարակութիւնը: Խօսեցանք մայրենիի դասաւանդումին եւ հայոց լեզուի խօսակցութեան նահանջին ու հայապահպանումին եւ տակաւին տարբեր մարտահրաւերներու մասին՝ Թուրքիոյ իրականութիւններուն լոյսին տակ: Յստակ է, որ Թուրքիոյ մէջ հայ ըլլալը ունի իւրայատկութիւններ: Եւ ճիշդ չէ Թուրքիոյ հայկական իրականութեան նայիլ մեր արտաքին աշխարհի ըմբռնումներէն եւ պրիսմակէն: Տարբեր է շատ բան: Կենսքը, մթնոլորտը, կացութիւնը, պայմանները, տուեալները եւ տակաւին՝ քաղաքական-ընկերային կարգավիճակները: Խօսեցանք այս բոլոր երեւոյթներուն մասին: Բայց այդ բոլոր իւրայատկութիւններուն եւ տարբերութիւններուն մէջէն Նաթալին էր, որ իր երիտասարդ վճռական հայեացքով դրաւ իր համոզումը. «Բայց հայ ենք»:

«Հայ մամուլէն մինչեւ այսօր տակաւին չեմ կշտացած»:

Ռոպեր Հատտեճեանը ունի երկար տարիներու վաստակ՝ իբրեւ խմբագիր, գրող ու հրապարակագիր՝ «Մարմարա»-ի: «Արդէն իննսուն տարիքը անցայ,- ըսաւ ան: – Ֆիզիքականս ատենը մէջ մը կը յիշեցնէ իմ տարիքս», ժպիտը իր դէմքին եւ ուրախ տրամադրութեամբ մը շարունակեց իր զրոյցը:

Ռոպեր Հատտեճեանը շատ երկար ճամբայ կտրած է հայ մամուլի եւ հրապարակագրութեան առաքելութեան մէջ: Ծատ ապրած եւ տեսած է... Բայց մանաւանդ ականատես եղած է թուրքահայ իրականութեան եւ անոր բոլոր մտահոգութիւններուն: Ան կը գիտակցի, որ Թուրքիոյ մէջ հայ ըլլալը դիւրին չէ: Բայց «կարելի է միտքը եւ մտահոգութիւնը տարբեր ձեւերով արտայայտել ու վերջաւորութեան ըսել այն, ինչ որ կ'ուզէիր ըսել», ըսաւ ան՝ նոյն ժպիտը եւ ուրախ տրամադրութիւնը դէմքին վրայ: Ռոպեր Հատտեճեան հաղորդական մարդ է, եւ իր



հաղորդականութեան մեջ շատ բան կայ սորվելիք: Պետք է սորվիլ մեր երեց սերունդի ներկայացուցիչներուն փորձառութենէն եւ անոնց տեսադաշտերէն:

Արա Գոչունեանը երիտասարդ հայ մտաւորական-խմբագիր է, որ լաւապէս կը դրսեւորէ Նոր սերունդի եւ ազգային ինքնութեան ու առաքելութեան կառչելու գիտակցութիւնը: Ան ժառանգորդն է հայկական օրաթերթի մը «Ժամանակ»-ին եւ անոր աւելի քան հարիւր տարիներու աւանդին, օրաթերթ մը, որ մեծ ներդրում ունեցած է հայկական մամուլի եւ հրապարակագրութեան պատմութեան մեջ՝ Թուրքիա եւ աշխարհով մէկ: Եւ Արային համար եթէ կան մարտահրաւերներ, բայց հայ ինքնութիւնը եւ անոր պատմութեան շարունակականութիւնը վեր են ամէն տեսակի հաշուարկէ եւ գրաւականէ: Այս իմաստով, Արան կեցած է ամուր պատնէշի վրայ:

«Յայ կաթողիկէ համայնքը կը հաշուէ մօտաւորապէս երկու հազար հինգ հարիւր մարդ»: Գերապայծառ Լեւոն Չէփեանն է Թուրքիոյ մեջ հայ կաթողիկէ համայնքի առաջնորդը: «Մեծամասնութիւնը կ'ապրի Պոլսոյ մեջ», ըսաւ ան: Գերապայծառը ծանօթ կղերական է, բայց Նաեւ մտաւորական մարդ, որուն իմաստասիրական-փիլիսոփայական ու աստուածաբանական վաստակը մեծ է: Կրթական գործին կառչած է եւ կը հաւատայ հայ դպրոցին առաքելութեան՝ Թուրքիոյ մեջ թէ այլուր: Յայ կաթողիկէ համայնքը Թուրքիոյ մեջ ունի պատմութիւն՝ միջին դարերէն սկսեալ: Եւ գերապայծառը այդ Նոյն պատմութեան շարունակականութեան հաւատացողն է ու կառչած՝ անոր առաքելութեան:

«Այս հիւանդանոցը քաղաքին լաւագոյններէն է»: Թուրք վարորդն էր, որ զիս Սուրբ Փրկիչ հիւանդանոցէն հասցուց պանդոկ: « Յայկական է եւ բժշկական շատ լաւ կարելիութիւններ ունի», եզրակացուց ան, երբ ինքնաշարժէն վար իջայ:

Սուրբ Փրկիչը միայն հիւանդանոց չէ: Անկա պատմութիւն է, որ տակաւին կ'ապրի եւ կը վկայէ: Թանգարանը, եկեղեցին, բժշկական սարքաւորումները, տարեցներու պատսպարանը եւ տակաւին՝ գեղեցիկ պարտեզները: Յայուն պատմութիւնը կերտած բոլոր հայ պէյերը եւ ամիրաները իրենց նկարներով կը լեցնեն հայու հոգին: Կը Նայիս իւրաքանչիւր նկարին եւ կրնաս տեսնել անոնց տեսիլքը, բայց մանաւանդ՝ անոնց հաւատքը: Յաւատքը՝ հայուն պատմութեան: Յայու կեանքը ապրելու, գոյատեւելու եւ անոր պատմութեան շարունակականութեան: 1830 թուականին հիմնուած, բայց եւ այնպէս ամուր կառչած՝ կը շարունակէ այս հիւանդանոցը՝ կերտելու համար հայուն պատմութիւնը:

Յայուն պատմութիւնը: Իմ եւ մեր իւրաքանչիւրին պատմութիւնը: Կը փորձեմ ապրիլ Յրանդ Տինքի «Յիշատակի տուն»-ը: Ինք չկայ: Բայց կայ իր «տուն»-ը՝ իր կեանքը: Իր ապրած իւրաքանչիւր փորձառութիւնը, որ կերտած է պատմութիւնը... Յայուն պատմութիւնը:

Եթէ Յրանդ Թուրքիոյ քաղաքացին է, եւ ալ Լիբանանի եւ Կիպրոսի քաղաքացին եմ: Եւ չեմ ալ գիտեր, թէ իմ երկրային կեանքիս մեջ պիտի ստանա՞մ երրորդ քաղաքացիութիւն:

Բայց կը շարունակեմ: Եւ Յրանդը՝ « Յայ եմ...»: Ու տակաւին Նաթային՝ «Բայց հայ եմ...»: Եւ իւրաքանչիւր պատմութիւն, որ տեսայ եւ ապրեցայ Պոլսոյ մեջ... «Յայ եւ հայկական էր»:

Եւ եթէ տակաւին լիբանանցի ու կիպրացի եմ, բայց «հայ եմ», եւ բոլորս հայ ենք: Եւ մեր բոլոր «տարբերութիւններուն» մեջէն՝ «օտար» չենք: Այլ բոլորս ալ «Յայաստանի ու Արցախի եւ աշխատարած հայկական սփիւռքի բարոյական մէկ մասնիկն ենք, ցեղակից ենք»:



---

Եւ այս «մասնիկ»-ը՝ «ցեղակցութիւն»-ը, իմ-մեր եւ հայուն պատմութիւնն է, որ կը շարունակուի եւ պիտի...

Հայկական մտահոգութիւնները շատ են: Մարտահրաւերները՝ բաւական: Պոլիս ու տակաւին քիչ մը ամբողջ հայկական իրականութեան մէջ:

Բայց կայ պատմութեան շարունակականութիւնը: Իմ եւ իւրաքանչիւր հայու պատմութեան շարունակականութիւնն է: Եւ պիտի շարունակուի, որովհետեւ...

Բոլորս հայ ենք:

Պոլիս եւ աշխարհով մէկ:


Եւ հայուն պատմութեան շարունակականութիւնը կը յաջողի, երբ բոլորս կը շարունակենք ապրիլ գիտակցութիւնը,

Որ՝ «հայ ենք...»:

## Տեսակէտ

### ԱՒԱՆՂԱՊԱՆ ԱՍՈՒԼ ՍՓԻՒՌՔԷՆ

### ԴԵՊԻ ՅԱՌԱՋԱՊԱՆ ՆՈՐ ՍՓԻՒՌՔ



Նախ՝ անհրաժեշտ է կը խորհինք, յստակացում մը՝ «աւանդապահ»ութեան շուրջ: Այս եզրոյթը բնագանցական մտածելակերպին մէջ ունի բացարձակ իմաստ: Հետեւաբար՝ բացասական նշանակութիւն եւ ոչ թէ դրական, քանի որ պահպանողական է եւ կը հակասէ բարեփոխումին, բարենորոգումին եւ ուրեմն՝ յառաջդիմութեան, յառաջադէմ զարգացումին:

Դրական աւանդին պահպանումն է միայն ցանկալին ու քաջալերելին: Բայց ժխտական աւանդին պահպանումը՝ չենք գնահատեր, չենք քաջալերեր, եւ՝ չենք ցանկար մանաւանդ: Ժամանակին հետ քայլ պահելն է, յառաջդիմութիւնն է ցանկալին

ու գնահատելին:

Մեծ Եղեռնին ու Տարագրութեան ստեղծած Սփիւռքը չեղաւ կամ չկրցաւ ըլլալ՝ համապատասխան հակազդեցութիւնը գործուած ոճիրներուն դէմ, քանի որ տարագրեալներու բեկորները անտիրական մնացեր էին, եւ Արեւմուտքի օրուան տիրական բրիտանացի եւ ֆրանսացի գաղութարարները տնօրինեցին տարագրեալներու բեկորներուն տեղաբաշխումն ու կազմակերպումը: Ասոր իբր հետեւանք ստեղծուած յետ-Եղեռնեան Սփիւռքները եղան ամուլ ու աւանդապահ՝ դար մը ամբողջ: Սակայն այսօր, կազմաւորուիլ սկսած է նոր՝ Յառաջապահ Սփիւռքը, քանի որ հայկական երեք աւանդապահ կուսակցութիւնները չորդեգրեցին Մեծ Եղեռնին ու Տարագրութեան ոճիրներուն համապատասխան առաջադրանքը, որ բնականօրէն պիտի ըլլար հայրենիք վերադառնալու առաջադրանքը: Անոնք անձնատուր եղան հայրենագրկումին, գոհացան հայապահպանումի առաջադրանքով, հայրենիքէն դուրս, ձեւով մը՝ յաւերժացնելով հայրենագրկումի Սփիւռքը...:

Այլ խօսքով՝ աւանդական կուսակցութիւնները իրենց ծրագրերը չվերանորոգեցին ու չպատշաճեցուցին Արեւմտահայութեան նոր իրավիճակին, որ հայրենագրկումն էր, որուն բնական հակադարձութիւնը՝ հայրենիք վերադարձի առաջադրանքն էր, եւ ոչ թէ՝ ատոր կատարուած փաստը ընդունելով՝ որդեգրել անոր համակերպելու առաջադրանքը՝ հայապահպանումը, որպէս ինքնանպատակ լոգունգ, որ չունի շօշափելի նպատակ մը: Օրինակ. հայապահպանում՝ հայրենադարձի նպատակով եւ զայդ կարելի դարձնելու մտահոգութեամբ: Որովհետեւ՝ տարագրեալ բեկորները Արեւմտահայութեան, եթէ կորսնցնեն իրենց ՏԱՐԱԳՐԻ գիտակցութիւնը եւ սկսին գործել ՏԱՐԱԲՆԱԿԻ գիտակցութեամբ, վերադարձող չի մնար...:

•••

«Պայքար» թերթին մէջ, վերջերս լոյս տեսան երկու յօդուածներ՝ երկու արթուն հրապարակագիրներու կողմէ. Սուրէն Սարգսեանի եւ Պարոյր Աղպաշեանի: Առաջինի



յօդուածին խօսուն վերնագիրը՝ «Քաղաքակա՞ն Եւ Արդեօք Աւանդական Կուսակցութիւնները», երկրորդինը՝ «Կուսակցութիւն Եւ Կուսակցականութիւններ՝ Կը Յամենա՞ն, Թե՛ Կը Վերանորոգուին»:

Պարոյր Յովհաննէս Աղպաշեան կը գրէ, թե՛ իր այս գրութեան պատճառ հանդիսացած Է Սուրէն Սարգսեանի գրութիւնը, եւ թե՛ ինք իր 2016 թուին լոյս ընծայած «Դիտարկումներ Եւ Դատումներ» վերնագրով հատորին մէջ ունի շարք մը յօդուածներ կուսակցութիւններու չվերանորոգուելուն շուրջ: Ան կը յիշէ երկուքը. «Յայկական Կուսակցութիւնները Անելիք Ունին» եւ «Աւանդականութիւնը Ուրկէ՞ Կը Սկսի ու Կը Վերջանայ»: Ան կը մերժէ այս կուսակցութիւնները յորջորջել «աւանդական»: Սակայն, իր ներկայ գրութեան մէջ կը քննադատէ անոնց աւանդապահութիւնն ու չվերանորոգուիլը, եւ հարցումի ձեւով անոնց կը վերյիշեցնէ թէ այսօր՝ նահանջած են, անոնց հարց տալով թէ այսօր՝

«Ո՞ր են»:

«Ի՞նչ իրագործումներու մէջ են»:

«Ի՞նչ հեռանկարներ կը հետապնդեն»

«Ո՞ր բեւեռներու վրայ կը դեգերին»:

«Ո՞ր հիմունքներով կը (վերա)գործեն եւ կը (վերա)յայտնուին»:

Ապա, անոնց կը հարցնէ պատճառները, իրենց՝

«Ժողովրդականութեան նուազումին»,

«Անդամակցութեան նօսրացումին»,

«Գործունեութեան սահմանափակումին, եւ՝

«Վստահելիութեան անկումին»:

Եւ ինք կու տայ պատճառները.

«Նաւապետին՝

«Ապիկարութիւնը,

«Անկարողութիւնը,

«Անշնորհքութիւնը,

«Անցելապաշտութիւնը,

«Անիրազեկութիւնը, եւ՝

«Անտեսլապաշտութիւնը»:

Եւ, իբր եզրակացութիւն, ան կը գրէ.





«Պահանջուածը եւ պահանջուելիքը եթէ՝ անկարելիութիւն մըն է (ոմանց համար), ալ ի՞նչ ձանձրոյթ մտահոգուելու, մանաւանդ անոնք, որոնք ինքնագոհ են իրենց գործով, դիրքով ու պաշտօնով:

«Եթէ կուսակցութիւններն ու կուսակցականութիւնները պիտի պահուին ու պահպանուին, ՈՒՂԻՆ ՈՒ ՏԵՍԻԼՔԸ, ՂԵԿԸ ԵՒ ՄՂԻՉ ՈՒԺԸՊԵՏԷ Է ՓՈԽՈՒԻՆ, ԲԱՐԵԿԱՎՐԳՈՒԻՆ ՈՒ ՎԵՐԸՆԶԻԲԻՆ, այլապէս՝ պատասխանը յստակ է»:

Շնորհաւորելի է Պարոյր Յովհաննէսի Աղպաշեանը իր այս զգաստացնող եւ երախտաշատ հարցադրումին եւ արդէն թարախակալած վերջին դարմանումին անհրաժեշտութեան մասին հնչեցուցած ահազանգին համար: Առաւել շնորհաւորելի պիտի ըլլար՝ եթէ գէթ կուսակցութիւններուն մոռացութեան տուած շօշափելի նպատակ մը, տեսիլք մը, հեռանկարային գործունէութեան ծրագիր մը առաջարկած ըլլար: Որովհետեւ՝ բուն վերքը, Էական ախտը՝ նաւապետներու ապիկարութիւնը չէ, այլ՝ նպատակի թուլութիւնն ու անորոշութիւնն է, տեսլականի բացակայութիւնը:

Քանի որ նպատակին վստահութիւնն է, տեսիլքին քաշողականութիւնն է, պատմական անհրաժեշտութիւնն է, որ նաւապետին պիտի տան համապատասխան մղիչ ուժ, կորով, յանձնառութիւն ու դիմադրականութիւն... որոնցմէ զուրկ է թոյլ կամ պղտոր, վերացական կամ ինքնանպատակ տեսիլքը, ինչպէս՝ հայապահպանումի ընդհանուր կարգախօսին համար հայապահպանումը, որ չունի շօշափելի նպատակ... հայապահպանում՝ ի՞նչ նպատակի համար՝ ԳՈՐԾՆԱԿԱՆ, որ անհրաժեշտութիւն է:

Այսուհանդերձ, Պարոյր Յ. Աղպաշեան շնորհաւորելի է՝ իր այս մանրագնին ախտաճանաչումը, յաճախակի եւ յաջողապէս ահազանգելուն համար:

Իսկ մեր հաստատ համոզումով, կուսակցութիւններուն անելիքը՝ Տարագիր Արեւմտահայութեան համար, Յետ-Եղեռնի ու Յետ-Տարագրութեան ստեղծուած պատմական անհրաժեշտութիւնն էր՝ 1916-Էն ի վեր, հայրենիք վերադարձի սուրբ գործը: Որդեգրելով՝ Հայ Հողային Դատի գործնական հետապնդումը, ոչ՝ բարոյական, քարոզչական կամ աղաչական ու անչափահասին յատուկ՝ ապաւինողական... որուն առաջին փուլին իրաւականօրէն հրամայական առաջադրանքն է՝ ստեղծել Տարագիր Արեւմտահայութեան Համասփիւռքեան Քոնկրէսը, որպէս Տարագիր Արեւմտահայութեան կեդրոնական, ներկայացուցչական (ընտրեալ) եւ միակ լիազօր կառոյց, որպէսզի զգենու իրաւական անձնաւորութեան կարգավիճակ, կարենալու համար դիմել՝ միջազգային ատեաններու:

Հայրենի հողը կորսնցուցած Արեւմտահայը, կորսնցուցած է իր ինքնութեան անբաժանելի մէկ կարեւոր մասը, իր հոգին՝ կ'ըսէ Մարտիրոս Սարեան. «Հողը մի կենդանի էակ է, նա ունի իր հոգին, առանց հարազատ հողի հետ սերտ կապի, մարդ չի կարող գտնել իրեն՝ իր հոգին»:

Աւանդական Սփիւռքը՝ իր աւանդական կուսակցութիւններուն ղեկավարութեամբ, չկարողացաւ վերափոխել իր ամուլ եւ անհոգի գոյութիւնը, որովհետեւ՝ չգիտցաւ կամ չկարողացաւ որդեգրել Տարագիր Արեւմտահայութեան Համասփիւռքեան՝ համահայկական ոգին պահանջող Քոնկրէսին Ծրագիրը, զոր երեք տասնամեակ քարոզեցին եւ առաջարկեցին հոյլ մը ռահվիրայ մտաւորականներ, քանի որ մնաց՝ աւանդապահ ու յետամնաց՝ իր անմիաբանութեան եւ համահայկականութեան ոգին մերժելու պատճառներով, եւ ռահվիրաները նկատուեցան երազատեսներ...:



Սակայն, ուրիշներ՝ հաւանաբար աւելի գործնապաշտներ, նախաձեռնեցին՝ ո՛չ աւանդապահ, այլ՝ Յառաջապահ Սփիւռքի կենսագործումին: 2004 թուականին, Արցախի մէջ, կազմելով Արեւմտահայութեան Ազգային Խորհուրդը, յաւակնելով ներկայացնել՝ Արեւմտեան Հայաստանի անկախ ճանչցուած պետութեան իրաւականօրէն շարունակուող կառոյցին սկզբնական կորիզը... Եւ մինչեւ 2018 թուականի Դեկտեմբեր ամիսը, 14 տարիներու լուռ ու մուկ թափուած ջանքերով, ստեղծեցին Արեւմտեան Հայաստանի պետական կառոյցներուն սաղմերը՝ 28,000 արձանագրեալ քաղաքացիներով, խորհրդարանով եւ կառավարութեամբ...: Ասոնք՝ հիմնադրեցին Յառաջապահ Սփիւռքը. այսինքն՝ Յառաջապահ Արեւմտահայութեան կորիզը:

Ուրեմն, Տարագիր Արեւմտահայութեան առջեւ ծառացող մարտահրաւերն է այսօր՝ ոչ միայն աջակցիլ, այլեւ գործօն մասնակցութիւն ունենալ աւանդապահ ամուլ Սփիւռքէն դէպի Յառաջապահ Սփիւռք անցումի այս շարժումին: Որպէսզի՝ բարձրանայ այս սաղմնային պետութեան քաղաքացիներու թիւը, զօրացնելու համար այս սաղմնային պետութեան ներկայացուցչական հանգամանքը, զայն հասցնելու համար կեդրոնականի եւ միակ լիազօրի հանգամանքներուն, որոնք կը պահանջուին Միջազգային Հանրային Իրաւունքին կողմէ, այս սաղմնային պետութիւնը ընդունելի եւ լսելի դարձնելու համար միջազգային ատեաններուն կողմէ: Այս է ահա Հայ Հոգային Դատի իրական ու գործնական հետապնդումին ճշմարիտ ուղին: Մնացեալը՝ ցանկատեսական հեթիաթ է, եւ՝ անչափահասին յատուկ անօգնականի ապաւինողականութիւն...: Երա՛գ:

Այս ճշմարիտ բայց երկար ուղին երկարատեւ համբերութիւն եւ յեղափոխականի յատուկ շունչ կը պահանջէ: Բայց այս համբերատարութիւնը ի զուր չէ, այլ՝ վարձահատոյց: Արիստոտել ըսած է. «Համբերութիւնը լեղի է, բայց անոր պտուղը՝ քաղցր»:

Ասուն մարդը անասուն կենդանիէն զատորոշող ազդակը անոր հոգին է:

Իսկ վարպետը՝ Մարտիրոս Սարեան, ըսած է. «Հողը մի կենդանի է, նա ունի իր հոգին, առանց հարազատ հողի հետ սերտ կապին, մարդ չի կարող գտնել ինքզին՝ իր հոգին»:

Հայրենի հողին հետ սերտ կապ կրնանք ունենալ, եւ՝ մեր հոգին վերագտնել միայն՝ Արեւմտեան Հայաստանի, Արարատի ազատագրութեամբ:

ՄԵԹՐ Գ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

27 Դեկտեմբեր 2019

## Տեսակէտ

### ՍՈՒՄԿԱՅԻԹ, ԽՈՃԱԼՈՒ...ԼՈՒԵՆՔ ՏԱԿԱԻՒՆ

### ԱՀԱՐՈՆ ՇԽՐՏԸՄԵԱՆ



Փետրուար ամսուան վերջին օրերուն զուգահիստի երկու թուականներ կը ցնցեն հայ ժողովուրդին ժամանակակից պատմութիւնը:

Առաջինը անկասկած Սումկայիթի ցեղասպանութեան տարեիցը՝ 27 փետրուար 1988, որուն հայոց պետականութիւնը եւ հայ քաղաքական միտքը տակաւին կը մերժեն տալ միատեսակ գնահատական, երկրորդը՝ Խոճալուի կոտորածը՝ 25-26 փետրուար 1992:

Չոյգ թուականները անկիւնադարձային հետեւանք ունեցան Լեռնային Ղարաբաղի ժողովուրդին ինքնորոշման եւ անկախութեան ճանապարհին վրայ:

Սումկայիթի եղեռնագործութիւնը վերջակէտ դրաւ խաղաղ ցոյցերով ազգային ինքնորոշման հասնելու Ղարաբաղի ժողովուրդին յոյսերուն վրայ: Երկրորդը՝ Խոճալու գիւղաքաղաքին ազատագրութեամբ հայկական ինքնապաշտպանութեան ուժերը չէզոքացուցին անկէ արձակուող ռումբերը եւ վերահսկողութեան տակ առին ռազմավարական կարեւոր նշանակութիւն ունեցող շրջանը: Խոճալուի ազատագրութեամբ՝ վերաբացուեցաւ Ստեփանակերտ-Ասկերան ճանապարհը, ինչպէս նաեւ Լեռնային Ղարաբաղի միակ օդակայանը:

Խոճալուի ազատագրութիւնը եւ ազերի բնակչութեան հեռացումը վերջ գտան ահաւոր ողբերգութեամբ: Հակառակ հայկական կողմին նախագգուշացումներուն, ինչպէս նաեւ Խոճալուի բնակիչներուն համար ստեղծուած մարդասիրական միջանցքին, ազերի զօրքերը միտումնաւոր սպանդի ենթարկեցին քաղաքէն հեռացող բնակիչները:

Ոճիրին ետին պահուած էր քաղաքական նպատակ. ընդվզում յառաջացնել Ազրայէճանի գործող նախագահ Այազ Մութալիպովի իշխանութեան դէմ, միաժամանակ հանրային կարծիք ստեղծել ղարաբաղի բնակչութեան դէմ, իբրեւ թէ հայ զինեալները ըլլային յանցագործութեան հեղինակը:

Սակայն ազերիական խաղատոմսին հաշիւները չարաչար սխալ դուրս եկան ամբաստանութեան շուկային մէջ: Երկրին նախագահ Այազ Մութալիպով առաջիններէն էր, որ հերքեց հայկական զօրքերու մասնակցութիւնը Խոճալուի կոտորածին:

Խոճալուի դէպքէն ամիս մը ետք, չէիս լրագրող Թանա Մազալովայի հարցումներուն պատասխանելով, Մութալիպով, խօսքը Խոճալուի կոտորածին ակնարկելով, յայտնեց. «Այս մէկը կազմակերպուած էր հրաժարականիս համար առիթ ստեղծելու նպատակով»: Մութալիպով նշեց, թէ կոտորածը կազմակերպած էր Ազրայէճանի ընդդիմութիւնը: Ան հերքեց կոտորածը հայերուն վերագրելու ազերիական փորձերը:



Վերջերս չէի լրագրողուհին անգամ մը եւս հաստատեց, թէ որքան ալ Ազրպէյճանի ներկայ նախագահ Իլիամ Ալիեւ հերքէր, Մուրթալիպովի հետ լոյս ընծայած հարցազրոյցը ամբողջութեամբ կը համապատասխանէր իրականութեան:

Գրեթէ տասը տարի ետք՝ 2002-ին, Ազրպէյճանի նախկին նախագահ Այազ Մուրթալիպով, «Նովոյէ Վրեմիա» թերթին տուած հարցազրոյցին մէջ դարձեալ հաստատեց իր միտքը. «Ակնյայտ էր, որ խոճալուցիներուն գնդակահարութիւնը կազմակերպուած էր մէկու մը կողմէ, Ազրպէյճանի մէջ իշխանափոփութիւն կատարելու համար»:

Խոճալուի կոտորածը, օրուան նախագահ Այազ Մուրթալիպովը իշխանութենէն հեռացնելու նպատակով Ազրպէյճանի գործող նախագահ Իլիամ Ալիեւի հօր՝ Յայտար Ալիեւի կազմակերպած սադրիչ սպանոյն էր: Մէկ կողմէ անոր վրայ բեռնելով ազերի բանակին պարտութեան պատասխանատուութիւնը, միւս կողմէ հանրային կարծիքին առջեւ պղտորելու հայ ժողովուրդին դիմագիծը....

Մուրթալիպովի մեկուսացումէն ետք ազերի իշխանութիւնները զանազան պատճառաբանութիւններու տակ չեզոքացուցին խոճալուի կոտորածին շուրջ անկախ հետաքննութիւն վարող լրագրողները, մարդկային իրաւանց պաշտպանները:

Խոճալուի հարցով տխուր ճակատագիր կը սպասէր պետական «տեսակէտ»-ին հակոտնեայ համոզում արտայայտող լրագրողներուն: Ազերի նկարահանող ճինկիզ Մուսթաֆայեւ խորհրդաւոր պայմաններու մէջ սպանուեցաւ: Նոյն ճակատագիրը ունեցաւ բանակի դաշտային հրամանատար Ալա Եագուպը: «Մոնիթօր» անկախ թերթի ազերի լրագրող Էյնուլա Ֆաթուլայեւ 2005-ին տասը օրով այցելեց Լեռնային Ղարաբաղ: «Մոնիթօր»-ի մէջ Ֆաթուլայեւի առաջին տեսագրութիւնը լոյս տեսնելէ քանի մը օր ետք անձանօթներ սեփական բնակարանին առջեւ սպաննեցին թերթին խմբագիրը՝ Էլմար Յուսէյնովը, իսկ Ֆաթուլայեւը դատապարտուեցաւ գումարներ յափշտակելու եւ պետական դաւաճանութեան յանցանքով...

Խոճալուի իրադարձութիւններուն մուրթ ծալքերը չխանգարեցին Պաքուի իշխանութիւնները, հակահայ քարոզչութիւն ծաւալելու նպատակով շահագործելու ողբերգութիւնը:

Ազերիական քարոզչութիւնը այսօր աշխարհի չորս ասիերուն վրայ նենգաբար խեղաթիւրուած կը ներկայացնէ խոճալուի ազատագրութեան զարգացումները:

Մենք՝ հայերս, բաւարար ապացոյց ունինք մերկացնելու խոճալուի մէջ հարազատ ժողովուրդին դէմ ազերի իշխանութիւններուն կազմակերպած կոտորածը:

Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան պարունակին մէջ խոճալուն կը մնայ ազերիներու ներքին եւ արտաքին ապտեղակատուական քաղաքականութեան սպառողական շուկայի գլխաւոր դրամագլուխը: Մինչդեռ խոճալուի իրադարձութիւններուն շուրջ ազերի պաշտօնակատարներու, իրաւապաշտպաններու, լրագրողներու եւ խոճալուի բնակիչներուն վկայութիւնները հիմնովին կը հերքեն Պաքուի ստայօդ տարբերակները:

Ազերի իրաւապաշտպան Արիֆ Եունուսով, «Չերքալօ» թերթին, յուլիս 1992-ի համարին մէջ գրած է. «Քաղաքը եւ անոր բնակչութիւնը գիտակցաբար զոհ մատուցուեցան քաղաքական նպատակին: Ազրպէյճանի Գերագոյն խորհուրդի նախագահ Թամերլան Քարայեւ, "Մուխալիֆաթ"» օրաթերթի 28 ապրիլ 1992-ի համարին մէջ գրած է. «Խոճալուի ողբերգութիւնը իրականացուցած են Ազրպէյճանի իշխանութիւնները»:



Հայտար Ալիեւ մեծահոգաբար ազնւութիւնը ունեցած է խոստովանելու, թէ Խոճալուի դէպքերուն «Մեղաւորը նաեւ Ազրպէյճանի նախկին ղեկավարութիւնն է»: Իսկ «Պիլիք Տունիասը» լրատուական գործակալութեան համաձայն՝ ապրիլ 1992-ին, Նոյնիսքն Հայտար Ալիեւը յայտարարած է. «Խոճալուի Արիւնահեղութիւնը մեր օգտին պիտի ըլլայ: Մեզի պէտք չէ միջամտել դէպքերուն ընթացքին»:

Ազրպէյճանի Ազգային ճակատի ներկայացուցիչ, ազգային անվտանգութեան նախարար Վաքիֆ Հիւսէյնով, վերլուծելով երկրին մէջ պատահող միջադէպերը, տառացիօրէն գրած է. «1992 թուականի Պաքուի յունուարեան իրադարձութիւնները եւ Խոճալուի իրադարձութիւնները միեւնոյն անձերուն գործն է»:

Իւրաքանչիւր փետրուար-մարտ ամիսներուն ազերիական դեսպանատուններու, տարբեր երկիրներու ազերիական եւ թրքական համայնքներու եւ կազմակերպութիւններու ճիգերով միջոցառումներ կը կազմակերպուին «Խոճալուի ցեղասպանութեան» նուիրուած, անոնց նպատակն է կարելի եղած չափով նստեցնել հայ ժողովուրդը:

Վերջին տարիներուն ազերիները համացանցը ողողած են «Խոճալուի ցեղասպանութեան» սին քարոզչութեամբ: Հայտար Ալիեւի անուան պետական հիմնադրամը մեծ ծաւալով նիւթեր լոյս կ'ընծայէ եւ կը տարածէ:

Հակահայ այս արշաւին դէմ բաւական տարօրինակ կը մնայ ազերիական ստայոյ քարոզչութիւնը՝ չէզոքացնելու կամ անոր հակադարձելու ուղղութեամբ Հայաստանի յաջորդական իշխանութիւններուն համեստ լռութիւնը: Նոյնքան եւ համեստ են համացանցի վրայ ազերիական խարդաւանքները կատեցնող միջոցները:


Այսօր երբ արդարութեան եւ ճշմարտութեան փոխարէն նաւթային եւ ռազմաքաղաքական հաշիւներով կը տնօրինուին հարցերը, երբ երկու չափ եւ երկու կշիռով կը ղեկավարուի մեր օրինեալ աշխարհը, բաւական զարմանալի տպաւորութիւն կը ձգէ ազերիական սադրանքներուն դէմ Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան գրեթէ անգոյ հակազդեցութիւնը

Սումկայիթը եւ Խոճալուն ցոյց կու տան թուրք-ազերիական բարբարոսութեան երկու երեսները: Պաքու սեփական ժողովուրդին դէմ դաւաճանութիւնը հայերու վրէժխնդրութիւն կը ներկայացնէ.... լռե՞նք տակաւին:

## Տեսակէտ

### ՏԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ՝

### ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆԱՏԻՊ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ ՄԸ



Ներկայի Չայ Սփիւռքին փոքրամասնութիւնը՝ ՏԱՐԱԲՆԱԿ Արեւելահայերն են (յետ-անկախութեան) եւ Արեւմտահայերը (Նախաեղեռնեան), իսկ մեծամասնութիւնը՝ ՏԱՐԱԳՐԵԱԼ Արեւմտահայերը (յետ-եղեռնեան): Մենք ունինք երեք սփիւռքներ՝ Նախաեղեռնեան, յետ-եղեռնեան եւ յետ-անկախութեան:

Տարագիր Արեւմտահայութեան մեծամասնութիւնը մոռցած է (կամ մոռացութեան տուած) իր ՏԱՐԱԳՐԵԱԼԻ վիճակը եւ կը գործէ ՏԱՐԱԲՆԱԿԻ գիտակցութեամբ...: Իսկ փոքրամասնութիւնն է, որ կը գիտակցի իր ՏԱՐԱԳՐԵԱԼԻ վիճակին, եւ՝ հետեւաբար չէ մոռցած Արեւմտահայաստանի եւ Կիլիկիոյ ազատագրութեան դատը: Այս փոքրամասնութիւնը՝ Չայ Սփիւռքի «Յառաջապահ

ջոկատ»ն է, Աւանգարդը (Avant-Garde):

Ներկայ գրութիւնը հասցեագրուած է՝ Տարագիր Արեւմտահայութեան այն մեծամասնութեան, որ այսօր կը գործէ ՏԱՐԱԲՆԱԿԻ գիտակցութեամբ, յուսալով՝ որ այս գրութիւնը կարդալով, անոնք կ'անդրադառնան իրենց ՏԱՐԱԳՐԵԱԼԻ իրական վիճակին... որպէսզի սկսին գործել ՏԱՐԱԳՐԵԱԼԻ գիտակցութեամբ, եւ զգան իրենցմէ սպասուած դերակատարութեան անհրաժեշտութիւնն ու պարտականութիւնը... Արեւմտահայաստանի եւ Կիլիկիոյ ազատագրութեան սրբազան գործին մէջ: Այսինքն, որպէսզի միանան Տարագիր Արեւմտահայութեան այն փոքրամասնութեան, որ արդէն 2004 թուականէն ի վեր կը գործէ Տարագրեալի գիտակցութեամբ, հասնելու համար Արեւմտահայաստանի եւ Կիլիկիոյ ազատագրութեան վսեմագոյն նպատակին: Այսինքն՝ միանան կամ հետեւին Աւանգարդին:

• • •

Արեւելահայաստանի եւ Կիլիկիոյ ազատագրումը պահանջելու իրաւատեր կողմը, համաձայն Միջազգային Չանրային Իրաւունքին՝ Արեւմտահայութիւնն է, որուն մեծամասնութիւնը ՏԱՐԱԳՐԻ է, հայրենագուրկ, աշխարհացոյի ու բազմապատակ բեկորներէ կը բաղկանայ, որոնք զուրկ են՝ զիրենք իրաւականօրէն ներկայացնողի կարգավիճակ ունեցող կեդրոնական, ներկայացուցչական (այսինքն՝ ընտրեալ) եւ միակ լիազօր կառոյցէ մէ, որ ունենայ իրաւական անձնաւորութիւն (personne juridique), որուն շնորհիւ միայն, այդ կառոյցը ընդունելի եւ լսելի կրնայ ըլլալ միջազգային ատենաներու առջեւ:

Ուրեմն, այդպիսի կառոյցին ստեղծումը նախապայման մըն է՝ առաջին կարեւորագոյն քայլը առնելու համար:

Այդ կառոյցի ստեղծումին համար երեք տասնամեակներու երկայնքին (1985-2015) քարոզչական ու լուսաբանական լայնածաւալ աշխատանքին տարին հոյլ մը մտաւորականներ, իրաւագիտական առաջնորդութեամբը՝ Մեթր Ռուբէն Պօղոսեանի եւ Մեթր Գասպար



Տերտերեանի, տասնեակ հատորներով ու յօդուածներով, դասախօսութիւններով ու բազմաձայն լսարաններով, սպասելով՝ բոլոր հոսանքներու համախոհութեան, որպէսզի՝ համահայկականօրէն ձեռնարկուի Տարագիր Արեւմտահայութեան Համասփիւռքեան Քոնկրէսին (ՏԱՀՔ), որ պահանջուած կառոյցն է՝ կեդրոնական, ներկայացուցչական (ընտրովի) եւ միակ լիազօր: Ասոնք Նոյնիսկ Նախաձեռնող մարմինի հանգամանք չտուին իրենցմէ կազմուած խումբի մը, որպէսզի՝ իրենց «ՁԱԽ» դիմագիծին պատճառով, «ԱԶ»երը պոյթութի չենթարկեն ՏԱՀՔ-ի Ծրագիրը: Այսպէս, մեր անմիաբան հոսանքները պոյթութեցին ՏԱՀՔ-ի Ծրագիրը: Այս «Ձախ»երը Նոյնիսկ գրեցին մամուլին մէջ, որ եթէ հոսանքներէն մին, որ ունի ամենալայն համասփիւռքեան կազմակերպութիւնը, ինքը ձեռք առնէ այս Ծրագրի իրականացման առաջնորդութիւնը, իրենք պատրաստ են գործակցելու այդ հոսանքին հետ, ըլլալով՝ Ծրագրի պարզ հետեւորդներ...: Բայց, անօգուտ: Կ'երեւի թէ համահայկական ոգին կը պահանջէ մտային չափահասութիւն, որմէ զուրկ է անանդական Հայ Սփիւռքը...:

Սակայն, ուրիշ՝ անելի գործնապաշտ խումբ մը, եւ՝ հայ իրականութեան նկատմամբ անելի իրատես, որոշեց սկսիլ մասնաւորէն՝ հասնելու համար ընդհանուրին. 2004 թուականին Արցախի մէջ կազմեց՝ Արեւմտեան Հայաստանի Հայութեան Ազգային Խորհուրդը, որ 2007 թուականին անդամակցեցաւ ՄԱԿ-ի Բնիկ Ժողովուրդներու Իրաւանց Փորձագիտական Յանձնաժողովին, գործօն մասնակցութիւն բերելով այդ Յանձնաժողովի բոլոր նստաշրջաններուն, եւ մինչեւ 2018 թուի Դեկտեմբեր ամիսը յաջորդաբար ստեղծեց՝ Արեւմտեան Հայաստանի անկախ ճանչցուած պետութեան իրաւական շարունակութիւնը հանդիսացող պետութեան կառոյցներու սաղմերը, 28,000 արձանագրեալ քաղաքացիներով, որոնց շարքերուն մաս կը կազմէ տողերուս հեղինակը, կառավարութեամբ եւ խորհրդարանով, որուն Բ. շրջանի կազմը ներկայ խորհրդարանն է, որ ընտրուեցաւ 2018 թուի Դեկտեմբերին (հինգ տարիներու համար), մինչեւ՝ 31 Դեկտեմբեր 2023: Ասիկա իրականացնող տարագրեալ Արեւմտահայերու ջոկատը՝ ուրեմս, Նոր Սփիւռքն է (Տարագիր Արեւմտահայութեան բեկորներու «Յառաջապահ ջոկատ»ը...):

Այս խորհրդարանը, Տարագրութեան մէջ, այն միակ մարմինն է, որ ընտրուած է 20,000 արձանագրուած եւ քաղաքացիութեան ինքնաթուղթ ունեցող Տարագիր եւ Հայրենաբնակ (Արեւմտահայաստանի բնակիչ) Արեւմտահայերու ձայնով...:

28,000 քաղաքացիներուն 20,000-ը կրցած է մասնակցիլ Բ. ընտրութեան (այսինքն՝ քուէարկելու իրաւունք ունեցող քաղաքացիներուն 71%-ը):

Այս քաղաքացիները այժմ կը բնակին 27 երկիրներու մէջ՝ Արեւմտահայաստան, Արեւելահայաստան, Թուրքիա, Սուրիա, Լիբանան, ԱՄՆ, Ֆրանսա, Ռուսաստան, Գերմանիա, Չուիցերիա, Գանատա, Հոլանտա, Անգլիա, Պելճիքա, Յունաստան, Կիպրոս, Շուէտ, Վրաստան (Ջաւախք), Աւստրիա, Աւստրալիա, Սպանիա, Լեհաստան, Արժանթին, Պուլկարիա, Իտալիա, Իրաք եւ Քաթար:

Խորհրդարանի պատգամաւորներուն թիւ 77-ն է, որոնց 73-ը հայեր, 3-ը յոյներ եւ 1-ը ասորի-քաղդեցի: Ասոնք ընտրուած են 16 տարբեր երկիրներէ՝ Արեւմտեան Հայաստան, Արեւելեան Հայաստան, Ռուսաստան, Չուիցերիա, Ֆրանսա, Գերմանիա, Հոլանտա, Լիբանան, Սուրիա, Վրաստան (Ջաւախք), Շուէտ, Արժանթին, Գանատա, ԱՄՆ, Յունաստան եւ Կիպրոս:

Հայ պատգամաւորները ծագումով կը պատկանին հայկական 13 շրջաններու՝ Կարս, Պիթլիս, Վան, Տիգրանակերտ, Համշէն, Տրապիզոն, Կարին, Իգդիր, Մուշ, Սեբաստիա, Սասուն, Ջաւախք եւ Կիլիկիա:





Պատգամաւորներու ամենէն երիտասարդը 18 տարեկան է, իսկ ամենէն տարեցը՝ 82: Երեք յոյն պատգամաւորներն են՝ Շածիլէֆթերիու Իոաննիս, Ստամպոլիդու Կիրա եւ Շածամպա Վասիլիկի: Իսկ ասորի-քաղդէացին՝ Պասսամ Թահիան: Պատգամաւորներու 13-ը կանայք են, 60-ը այրեր:

Այս խորհրդարանը կը ներկայացնէ՝ միայն 20,000 Արեւմտահայեր, ոչ միայն Սփիւռքէն, այլեւ՝ Արեւմտահայաստանէն: Եւ ուրեմն, ներկայիս ան կը հանդիսանայ Արեւմտահայութեան այն միակ ընտրեալ ներկայացուցչական կառոյցը, որուն պարտի միանալ ամեն գիտակից եւ յանձնառու արեւմտահայ՝ Տարագրեալ թէ Հայրենաբնակ, որպէսզի՝ յառաջիկայ ընտրութիւններուն, մասնակցին աւելի մեծ թիւով Արեւմտահայեր, որոնք ստացած են քաղաքացիութեան ինքնաթուղթ, զօրացնելու համար այս կառոյցի ներկայացուցչական հանգամանքը, զայն դարձնելու համար նաեւ՝ կեդրոնական ու միակ լիազօր կառոյց: Այսպիսով, լրացնելու համար Միջազգային Հանրային Իրաւունքին պահանջած նախապայմանները, որպէսզի՝ այս խորհրդարանը ստանայ իրաւական անձնաւորութեան կարգավիճակ՝ ներկայացնելու Արեւմտահայութիւնը, եւ անոր անունով պահանջելու միջազգային ճանաչում, եւ՝ Արեւմտահայաստանի ու Կիլիկիոյ ազատագրում թրքական բռնագրաւումէն:

Տատամսելու եւ դանդաղելու ժամանակ չունինք, եւ իրաւունք ալ չունինք՝ երբ ներկայ անցումային ժամանակներու միջազգային զարգացումները՝ որեւէ ժամանակէ աւելի, նպաստաւոր են մեր հողային դատին համար, եւ կը զուգահիսին՝ Սեւրի դաշնագրի եւ Ուիլսոնեան Իրաւարար Վճիռի դարադարձերուն...:

Միջազգային գետնի վրայ առաջին նպաստաւոր զարգացումը այն է, որ Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ Գ. Աշխարհամարտ մը անհաւանական է, քանի որ Արեւելքի մեծերը, որոնք յառաջխաղացքի մէջ են, դէմ են ատոր, իսկ Արեւմուտքի մեծերը, որոնք նահանջի մէջ են, անկարող են ատոր: Եւ արդէն՝ ազդանշաններ ալ կան, որ Փութին-Թրամփ գաղտնի համաձայնութիւն մը կնքուած է՝ Գ. Աշխարհամարտը բացառելու նպատակին շուրջ: Իսկ Մեծ Եղեռնը կարելի դարձնող մեծագոյն առիթը Ա. Աշխարհամարտն էր, որուն ժամանակ Օսմանեան Կայսրութիւնը Գայգերական Գերմանիոյ դաշնակիցն էր, իսկ Գերմանիա կը հովանաւորէր Փանթուրքիզմի Ծրագիրը, քանի որ ինք եւս դարձեր էր նորագոյն իմպերիալիստական տերութիւնը, որ դէպի Արեւելք ծաւալելու արտոժակներ ունէր...:

Ասոր իբր հետեւանք, երկրորդ նպաստաւոր իրականութիւնը այն է, որ Միջին Արեւելքի կայունութիւնը խանգարող երկու տարատնկեալ պետութիւնները՝ Փանթուրքական\_Նոր-Օսմանական Թուրքիան եւ Սիոնական Իսրայելը... որոնք ցարդ եղած են ամերիկեան իմպերիալիզմի օֆֆշոր ռազմախարիսիները, դադրած են այսօր ներկայացնելու երկի իրենց սպառնալիքը: Անոնք մեծ մասամբ չեզոքացուած են Փութինի վարած զօրեղ եւ ինքնավստահ դիրքերէ մեկնած՝ խաղաղասիրական համբերատար ու զգաստութեան հրաւիրող Նոր, արտասովոր քաղաքականութեան շնորհիւ: Եւ արդէն Գ. Աշխարհամարտի բացառումով, Սիոնիզմն ու Փանթուրքիզմը կը կորսնցնեն իրենց նախկին ծաւալողապաշտ դերակատարութիւնը: Այսինքն՝ գրեթէ կը կորսնցնեն իրենց «գոյութեան իրաւունքը», քանի որ Թուրքիան եւ Իսրայելը անկարող են վարելու ծաւալապաշտական քաղաքականութիւն, առանց իմպերիալիստ Արեւմուտքի նեցուկին ու հովանաւորութեան:

Երրորդ նպաստաւոր զարգացումը. Սովետ Միութեան ինքնալուծարումին հետեւանքով ստեղծուած միաբեւեռ աշխարհակարգի,– ամերիկեան իմպերիալիզմի միահեծան





նստիկանապետութեամբ, որ Փանթուրքիզմի եւ Սիոնիզմի ծրագրերուն հովանաւորն էր...–, վախճանն է, եւ նոր բազմաբեւեռ հաւասարակշռեալ աշխարհակարգի ծնունդն է, որուն կորիզը՝ BRICS-ի (Պրագի, Ռուսաստան, Յնդկաստան, Չինաստան եւ Հարաւային Ափրիկէ) հակաիմպերիալիստական համագործակցութեան երեք-ցամաքամասային ճակատն է, որուն շոգեշարժը (լոբոմոթիվը) Հենրի Բիսինըրի իսկ վկայութեամբ՝ Փութինեան Ռուսաստանն է, եւ որուն երկու մեծագոյնները Ռուսաստանն ու Ժողովրդային Չինաստանն են, որոնք դէմ են Փանթուրքիզմին, իրենց ալ ազգային գոյութենական շահերուն պատճառով, որոնք կը համընկնին մեր շահերուն հետ:

Միջազգային գետնի վրայ, այս երեք հայանպաստ զարգացումները ոսկի առիթ մըն են մեր հողային դատին համար. անսախընթաց առիթ մը.

Եթէ՝ մենք գիտնանք եւ կարենանք ճիշդ գործել, օգտուելու համար մեզի տրուած այս բացառիկ առիթէն...: Տատամտումն ու դանդաղումը, ձեռնպահուիւնն ու դուրսին ապաւինումը աններելի ոճիրներ են այսօր... մեր հողային դատին դէմ:

Ոչ մէկ չքմեղանք եւ ոչ մէկ ինքնարդարացում մնացած է մեզի այսօր, այս տարիներուն, եթէ՝ չգիտնանք ու չկարողանանք օգտուիլ այս (հաւանաբար անկրկնելի) ոսկի առիթէն:

Պատմութեան առջեւ՝ բոլորս պատասխանատու ենք՝ քանի որ ապաւինելու կարօտ անչափահասները չենք այսօր..., եթէ՝ չցուցաբերենք ճշմարիտ համահայկականութեան ոգին:

Եթէ՝ շարունակենք քնանալ մեր անցեալի իրագործումներուն վրայ:

Եթէ՝ կրկնենք Մեծ Եղեռնի դարադարձի մեր ձեռնպահուիւնը:

Եթէ՝ Սեւրի դաշնագրի եւ Ուիլսոնեան Իրաւարար Վճիռի դարադարձերն անգամ վատնենք՝ մեր անտարբերութեամբ եւ անմիաբանութեամբ (իբր հետեւանք մեր մտային յետամնացութեան եւ անչափահասութեան), ինչ որ կրնայ ըլլալ... մեր վերջին անձնասպանութիւնը:՝

Եթէ՝ մենք ուրանանք կամ անգիտանանք մեր ապրելու իրաւունքը... եւ ուրիշները նկատենք պատասխանատու:

Իրաւունք մը չի կրնար ապրիլ ու յաղթանակել՝ եթէ անոր իրաւատէրը տէր չկանգնի իր իրաւունքին: Ուրիշի մը սպասող իրաւատէրը՝ արժանի չէ այդ իրաւունքին: Արժանի չէ ապրելու եւ յաղթանակելու, քանի որ գիտակցութիւնը չունի իր հայրենագրկեալի վիճակին, եւ՝ կամքը չունի ազատագրուելու այդ վիճակէն...:

Եպիկիւրոս (Ն.Ք. 341-270) ըսած է. «Յիմարութիւն է մարդուն համար, Աստուծմէ խնդրել բան մը, զոր ինք կրնայ իր ուժերով ձեռք բերել»:

Իսկ Արիստոտէլ ըսած է. «Ինքնաճանաչումը՝ իմաստութեան սկիզբն է»:

Ուրեմն, թող բոլոր իմաստուն Արեւմտահայերը ինքնաճանաչումով գիտակցին իրենց հայրենագրկեալի եւ տարագրեալի վիճակին, եւ՝ դադրին Աստուծոյ կամ ուրիշին ապաւինելու յիմարութիւնը գործելէ եւ իրենք մասնակից ըլլան՝ իրենց իսկ ազատագրութեան պայքարին, իրենց հայրենագրկեալի վիճակէն:

ՄԵԹՐ Գ. ՏԵՐՏԵՐԵԱՆ



ՊԵՂՈՒԹ, 8 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2019

## Գրական-Մշակութային

### ՓՈՒՆՋ ՄԸ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ



ՎԵՐՋԱԼՈՅՍԻՆ ԿԸ ՀԱՍԿՆԱՆՔ

Վերջալոյսին կը հասկնանք

Այգաբացի լուսեղիւթանքն,

Ու կը փորձենք դեռ ըմբռշխնել

Մայրամուտի վերջին շողերն,

Նախքան որ մութ խաւարն իջնէ

Իր սաւանով ծածկէ, ջնջէ

ճաճանչները արեւահեւ,

Որոնց զլացանք մեր բարեւը...

Կեանքի աշնան կը հասկնանք

Գարնան, ամրան կրակ ու բոցը,

Ու կը փորձենք վերջին անգամ

Ըմպել անոր ոսկի հուրը,

Լոյսի, սիրոյ բռնկումը,

Քանզի ուշ է, շուտով ձմեռն է,

Որուն միայն ոտնաձայնը



Մեզ արթնցուց խոր թմբիրէն...

4/2/2020

.....

ԵՐԿՆԱՌԱՔ ԲԱՌԵՐՈՒՄ

Մերթ անձրեւի պէս յորդառատ

Տեղացիք դուք, բառե՛ր անգին,

Երկնի համս ու բոյրը բերիք

Ծարաւ հոգւոյս, ծարաւ սրտիս,

Երկնի զուլալ ու բիւրեղեայ

Յիւթը բերիք պապակ շուրթիս,

Յոգիս կարծես երկինք դարձաւ

Ձեր տեղումով լուսածաղիկ...

Մերթ անձրեւել դուք զըլացա՛ք,

Ձերթ երկինքը մառախլապատ,

Ու յոյզերս մընացին լուռ

Ու բանտուած սրտիս մէջ փակ,

Ելք չգտա՛ն, կապարացա՛ն,

Սպասելով պահին հըրա՛ջք,

Երբ երկունքը դառնայ ծնունդ

Ձեր բառերուն սիրածորան...

Եւ ես գիտցայ որ արարման

Յամար պիտ' արժանի՛ ըլլամ,

Մաքրելով միշտ սիրտս, հոգիս

Տիղմէն, ժանգէն առօրեական,

Որ սափորին մէջ իմ սրտին

Տեղա՛ք, տեղա՛ք վարդաբուրեան,

Ձերթ անձրեւը, շողն երկնառաք



---

Կա՛ր-կա՛ր ցարէք սիրավարար...

8/2/2019

.....

ՅՈՒՅՍ ՏԻԵՉԵՐՔ ՄԸՆ Է ԱՆԲԱԿ

Յոգիս տիեզերք մըն է անբաւ,

Անպարագիծ, անծայրածիր,

Որուն հիւլէն լոկ կրցայ տալ

Տողերով ցինջ ու սրտալիր...

Չըսուածին մէջ հոգիս միաց,

Մերթ հառաչեց, մերթ ալ գոռաց,

Մերթ ցնծագին ուրախացաւ,

Տագնապեցաւ, տուայտեցաւ,

Յեւաց սիրով, կարօտներով,

Բիւր տենդերով ու տենչերով,

Վառ պահեց միշտ երազն անմար

Լուսահեղեղ, վարդաբուրեան...

Տիեզերքիս մէկ մասնիկը լոկ

Բառերուս մէջ շողարծակեց,

Ձեզ տուի ես սիրով մը բորբ,

Չայն յանձնեցի լուսապարգեւ...

Խորին խորհուրդն անոր սակայն

Մնաց միշտ ալ անմատչելի,

Քանզի հոգիս իմս է միայն

Կրնա՞մ լրիւ բաժնել զանի...

12/1/2018

.....

ԱՐԵԻ ԾՈՂ ՄԸ ՄԻԱՅՆ



---

Ժայռերուն մէջ, փուշերուն մէջ

Ծաղկեցաւ նուրբ ծաղիկն իմ,

Ազատ օդին, պարարտ հողին

Մնաց կարօտ ան սիրակեզ...

Յամառեցաւ ըմպել լոյսը

Թէկուզ նշոյլ մը ան ըլլար,

Մաքառեցաւ պահել թոյրը

Եւ դիւթանքն իր հոգեհմայ...

Տատասկին մէջ թաքնուած մնաց,

Լուսատոչոր այրեցաւ ան,

Տէ՛ր, կ'աղաչեմ մի զլանար

Արեւիդ շողն իմ ծաղկին տալ...

Թող ամէնուն բաժին իյնան

ճանճանչները վարար գարնան,

Արգաւանդ հող, սէր, գուրգուրանք,

Ինձ` արեւի շող մը միայն...

3/2/2016

.....

ԿԱ՞Ս ԱՐԴԵՕՔ

Ազատութիւն, դուն կա՞ս արդեօք

Այս բռնակալ աշխարհիս մէջ,

Թէ՞ քու ստուերդ է որ կը յաճէ

Չերթ ուրուական մը տազնապոտ...



---

Կառչած լոկ քու տեսլականիդ,  
Ամբոխը կոյր կը հառաչէ,  
Բայց քու բեռդ ինչպէ՞ս շալկէ  
Փոխան ինչքին, մամոնային...

Քու անունդ իր շուրթերուն  
Դեռ պիտ' սողայ դար ու դարեր,  
Ամբոխը կոյր ու շուարուն,  
Գերի նիւթին, արծաթին խեղճ...

-Ազատութի՛ւն- պիտի երգէ,  
Ստրկութեան քղամիդն հազած,  
Փոխան արծուի թելեր հրէ,  
Որ ճախրէ վեր անհունն գրկած..

.....

ԵՒ ՅՈՂՆԵՑԱՅ

Եւ յոգնեցայ շողոթորթեա՛լ ժպիտներէն,  
Պարա՛պ-սարա՛պ ու անիմաստ բիւր խօսքերէն,  
Կոշկոռ կապած, լոզունգացեալ բարեւներէն,  
Ստապատիր, յար կրկնուող քծինքներէն:

Եւ յոգնեցայ ես-ն մեծարող գովասանքէն,  
Սեփական փառքն անվերջ հիւսող գլուխ-գովանէն,  
Տգե՛տ-տգե՛տ բարբաջանքէն, մեծ խօսքերէն,  
Խաբեպատիր, քաջ Նազարեան խոստումներէն:

Եւ յոգնեցայ բիւր լուրերու խառնաշփոթէն,



---

Յոգի ու սիրտ ծախու հանած մունետիկէն,  
Ազատ խօսքը բռնաբարող ստախօսէն,  
Իրը պնդող, յամառ, փքուն յաւակնոտէն:

Եւ յոգնեցայ մա՛նր, գծո՛ւծ հաշիւներէն,  
Չնչին բարիքն իսկ հաշուարկող փերեզակէն,  
Նիւթէն, ինչքէն լոկ բարբառող ընչաքաղցէն,  
Յոգին անգամ ապրա՛նք ըրած նիւթապաշտէն:

Եւ յոգնեցայ անխո՛րք դարձած ձեւէն, ծեսէն,  
Կեանքը շուկա՛յ միայն ըրած սակարանէն,  
Յիմարացա՛ծ այս անհոգի դարէն, վարքէն,  
Անմարդացա՛ծ մարդ էակէն ու աշխարհէն...

8/2/2020

.....

ԿԱՐՕՏՆ ՈՒՆԻՄ

Կարօտն ունիմ քու սուրբ հողիդ,  
Քու լեռներուդ երկնասլաց,  
Օղիդ, ջուրիդ մաքրավճիտ  
Ու սուրբ խղճիդ արդարականչ...

Կարօտն ունիմ հովիտներուդ,  
Ուր գետերդ կը շառաչեն,  
Երգը բերեն հին դարերուդ  
Գեղածիծա՛ղ, զուարթաշէ՛ն...

Կարօտն ունիմ աւաններուդ,





---

Ուր հայ տոհմիկ մարդը արի  
Կռիւ կու տայ օրըն ի բուն  
Արարելու բերք ու բարիք...

Կարօտն ունիմ խաչքարերուդ,  
Որ ծունկ չոքեմ ու աղօթեմ,  
Բերան մ'աղօթք շշնջամ լուռ  
Ու մաքրուիմ, հոգիս գտնեմ...

13/7/2019

.....

ԿԻՆԸ...

(Մարտ 8-ի առիթով)

Կինը կեանք է, գարնան զարթօնք,  
Լոյս ու հո՛ւր է, սեր-բարուպի՛ն,  
Քնքշանք է նուրբ, լոյս մեղեդի,  
Սիրտի տրոփի՛ն ծաղկաթրթիռ..

Մի բուռ սիրտին անափ սէ՛ր է,  
Ամնացորդ նուիրում է,  
Մի բուռ մարմնին՝ ապառաժ կամք,  
Ներքին ոյժի աղբիւր վարար....

Ոգեղէն սլացք ու ճախրանք է,  
Վարդաբուրեան մի երա՛գ է,  
Չեքիաթներու հուրի փերի,  
Մոգական հմայք մը ան ունի...



---

Թէ հաւատայ՝ լեռներ շարժէ,  
Անկարելին կ'իրագործէ,  
Երկնէն երկիր հրաշք կը բերէ,  
Ամմահական շունչով կ'օծէ...

Թէ գայրանայ կրա՛կ կը դառնայ,  
Յուր կը տեղայ, շանթ կ'արձակէ,  
Ձինջ արտասուք ան կը թափէ,  
Մինչ զովանայ սիրտը այրած...

Ի՛նչ բառով ալ գայն բնորոշես,  
Գաղտնիք մ'ունի անքննելի,  
Առեղծուած մը անքնին  
Չայն ընծայէ խորհո՛ւրդ վսեմ...  
ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## Գրական-Մշակութային

### «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԱԾՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԵՆ»



Կարդացէ՛ք ՀՀ Սահմանադրութեան 15-րդ յօդուածը, որ վերոյիշեալ վերնագրի բառերով յստակօրէն կը խօսի մեր լեզուի և մեր մշակոյթի վերաբերմամբ պետութեան պատասխանատուութեան մասին: Սահմանադրութիւնը կը մերժէ խտրականացնել լեզուի հարցը: Ան չի զանազաներ արևելահայ և արևմտահայ գրական լեզուաճիւղերու միջև:

Սահմանադրութեան մտասկեռումը հայոց լեզուն է իր ամբողջական ժառանգութեամբ և ՎԵՐՁ: Իսկ հայոց լեզուն ունի երկու հաւասարազօր և անզուգական աշխարհաբար լեզուաճիւղեր, որոնք սերած են Նոյն դասական լեզուի պիրկ արմատէն, զոր Մեծարեւոյց հիացմունքով կոչած է «գրաբարի յուռթի շտեմարանը»: Աւելի ճշգրիտ՝ «շտեմարանները», քանի որ անոնք մեծ են, անոնք շատ են, անոնք անյատակ են և անպարփակ:

Հիմա հարց տանք, թէ ինչո՞ւ՝ այս գրառումը: Քանի որ լրջօրէն մտահոգ եմ մեր լեզուի այսօրուան կացութեամբ: Կար ժամանակ, երբ տագնապով կը խօսէինք միայն Սփիւռքի՝ լեզուական նահանջներուն մասին միշտ ապահով զգալով, որ ամուր է մեր թիկունքը: Համոզուած ըլլալով՝ որ հայրենի հողին վրայ կենդանի է ան և նախանձախնդիր՝ իր կենսունակութեան: Այսօր արդէն, -- և անկախութեան իրաւակարգի՝ իսկ «պաշտպանութեան ներքոյ» -- հետզհետէ կը զրկուինք այդ ինքնավստահութենէն: Ի՞նչ պատահեցաւ:

Երբ կը կարդամ հայրենի մեր մամուլը կամ էջ առ էջ կը տողանցեմ համացանցային անհամար կայքերու տարածքներէն կամ երբ կ'այցելեմ պետական դիւանակալութեան գրասենեակները յանկարծ կ'անդրադառնամ, որ ահաւոր բան մը սկսած է տեղի ունենալ մեր լեզուին հետ: Ան սկսած է փայտանալ. սկսած է կորսնցնել իր բնատուր աւիշը: Բառերը մեր բառերն են. տառերը մեր գիտցած տառերն են. հնչիւնները -- աղէկ -- մեզի հարազատ հնչիւններն են, բայց չկայ լեզո՞ւն: ԶԿԱ՛Յ ԼԵԶՈՒՆ: Կայ օտար լեզուամտածողութիւնը, որ քայլ առ քայլ կ'առնանագէ մեզ: Կը պարպէ մեր լեզուն իր ինքնութենէն: Մեր ինքնութիւնն է, որ կ'առնանագուի: Եւ մեր լեզուն աստիճանաբար կը հեռանայ մեր Էութենէն:

Մի՛ ընդվզիք: Ես մինչև երկինք կը յարգեմ այս պայթարին միւս կողմը գտնուող մեր բանաստեղծներն ու արձակագիրները: Մեր այն բժիշկներն ու գիտնականներն ու առհասարակ մեր լեզուի մաքրութեան նախանձախնդիր քաղաքացիները՝ որոնք աչքերէս արցունք կը բերեն իրենց վճիտ հայերէնով: Եւ ես կ'ըսկսիմ վերստին շնչել, երբ կը մտնեմ մեր գիւղաշխարհը և կը լսեմ մեր տոհմիկ լեզուին հոգեմօտ բառերն ու հնչիւնները: Ասոնց մասին չէ իմ խօսքս: Ոչ ալ՝ անպայման կ'առարկեմ, երբ բացառաբար հոս ու հոն օտար բառեր կ'ըստիպուկինք իւրացնել: Ես կը խօսիմ պետական մարմիններու յանցաւոր անփութութեան մասին: Ես կը խօսիմ ՀՀ քաղաքացիի յանցաւոր անտարբերութեան մասին: Աւելի վա՛տը՝ օտարամոլութեան մասին:



---

Ստորակայութեան բարդոյթին մասին: Դարձեալ Մեծարեցի կիզող բառերով՝ մեր «լեզուական արժանապատուութեան» մասին:

Յայոց լեզուի որակին, ընդոծին ճաշակին, ճշգրտութեան, գեղագիտութեան հանդէպ հպարտութեան բացակայութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մեր անփառունակ և ամօթալի պարտութիւնը մեր հաւաքական կեանքի ճակատագրական մարտահրաւերներուն դիմաց: Լեզուն լաւ չտրվի, գայն բծախնդրութեամբ չգործածել, անոր վրայ չգուրգուրալ, անոր գանձերը ամէն օր աւելի արհամարհել կը նշանակէ լեզուն յանձնել...իսկ լեզուն յանձնել կը նշանակէ յանձնել մեր հողը: Չգաստացէ՛ք:

ԿԱՐՕ ԱՐՄԵՆԵԱՆ

## Գրական-Մշակութային

### Սրտի խօսք ընկերոջս՝ Մեծն Սամուէլ Կարապետեանի մարմնական մահուան առթիւ



27 Փետրուարի կեսին, անողոք հիւանդութեան դեմ ամիսներու պայքարէ ետք այս աշխարհին հրաժեշտ տուաւ յուշարձանագետ, անգուգական ընկեր, գլխագիրով Յայ եւ Մարդ Սամուէլ Կարապետեանը: Միայն անոր մահէն ետք տեղեկացայ, որ ընդամենը 24 օր փոքր էր ինձմէ տարիքով: Սակայն, կը խոստովանիմ, որ ան ոչ միայն ինձմէ, այլեւ շատ ու շատ տիտղոսակիր եւ պաշտօնաւոր պատմաբաններէ մեծ էր եւ է՝ իր վաստակով

եւ իր ձգած ժառանգութեամբ:

Սամուէլը գիտական ոչ մէկ աստիճան ունէր, սակայն դոկտոր-փրոֆեսոր-ակադեմիկոսներու հոյլեր կրնար իր մէկ գրպանին անկիւնը դնել: Իբրեւ համեստագոյն անձնաւորութիւն, ան այդպէս չըրաւ, որովհետեւ թէ՛ այդպէս ընել իր միտքին ծայրէն իսկ չէր անցընէր, թէ՛ ալ այդպիսի փունճ բաներով մտածելու ԺԱՄԱՆԱԿ չունէր: Անոր տարերքը, ուշքն ու միտքը, կրնամ ըսել՝ թթուածի՛նը հայկական ճարտարապետութիւնն էր: 1978-էն սկսեալ, 40 տարիէ աւելի, ան գրեթէ բառացիօրէն քար առ քար շրջեցաւ մեր հայրենիքի բոլոր տարածքերուն մէջ, եւ ուր աչքին ինկաւ փշուր մը մեր հարուստ ճարտարապետութենէն՝ նկարեց, նկարագրեց, չափագրեց, տեսագրեց, մէկ խօսքով՝ փրկեց պատմութեան համար: Շնորհիւ Սամուէլի այդ նուիրեալ աշխատանքին, այսօր հայկական բազմաթիւ յուշարձաններ, որոնք գետնին հաւասարեցուած են Ատրպէյճանի, Յայաստանի գրաւեալ արեւմտեան հատուածի ու այսօրուան Վրաստանի տարածքներուն մէջ, իրենց կենսագրութիւնը կը շարունակեն՝ թէկուզ նկարներու, ֆիլմերու կամ թուղթի վրայ նկարագրութիւններու ու չափագրումներու տեսքով:

Մէկ անձ, որ կը կատարէր ակադեմական ամբողջ հիմնարկի մը աշխատանքը եւ դեռ աւելին... Յայկական ճարտարապետութեան աւելի նուիրեալ «խենթ» մը ես չեմ գիտեր մեր ողջ պատմութեան ընթացքին:

Սամուէլ Կարապետեանը կը գլխաւորէր Յայկական ճարտարապետութիւնը Ուսումնասիրող Կազմակերպութիւնը: Ան իր ետին կը ձգէ իր նման նուիրեալներու խումբ մը, որ վստահաբար պիտի շարունակէ իր Մեծ ՌԻՍՈՒՑԻՉ-ին գործը: ՀՅԴԿ-ի շրջանակին մէջ Սամուէլը իր աշխատակիցներուն հետ պատրաստեց եւ գիտական հրատարակութեամբ լոյս ընծայեց շուրջ 25 հատորներ, որոնցմէ իւրաքանչիւրը պարծանք կարելի է համարել անվարան: Ան նաեւ եղաւ հիմնադիրը, խմբագիրն ու հրատարակիչը «Վարձք» հանդէսին, որ նոյնպէս նուիրուած էր հայկական ճարտարապետութեան, մեծ մասամբ՝ հարեւան երկիրներու մէջ հայոց կոթողներու վերացման բացայայտումներուն՝ անհերքելի ապացոյցներով:



Սամուէլ Կարապետեանը նաեւ մշակութաբան էր, հայոց լեզուի աննկուն պաշտպան: Ուր հայոց լեզուի նկատմամբ ոտնձգութիւն կար՝ հոն էր Սամուէլը՝ մինչեւ վերջ պայքարելու իր անյողողող կամքով: Իր համար, հայոց լեզուն ու հայոց հայրենիքը հոմանիշներ էին:

Սամուէլը անդադար կը կրկնէր հայ նոր սերունդը ազնուացնելու եւ զայն Յայրենիքին կապելու իր ուղեցոյցը. «Եթէ հայրենիքդ ճանաչես՝ նրան անպայման կը սիրես, իսկ եթէ սիրես՝ նրան տիրութի՛ւն կ'անես»: Ան կ'առաջարկէր, որ դպրոցներու պատասխանատուները աշակերտները պարբերաբար տանին Յայրենիքի այս կամ այն անկիւնը, ուր երեխաներն ու պատանիները տեսնելով բնութեան գեղեցկութիւնը եւ իրենց նախնիներուն կերտած հրաշք կոթողները, կը սիրեն զանոնք, եւ հետագային անպայման կը գուրգուրան անոնց վրայ: «Ճանաչել, սիրել, տիրել»: ա՛յս էր հայրենասիրութեան ու հայրենատիրութեան սամուէլեան խտացուած բանաձեւը:

Սամուէլը եղաւ նաեւ 2018-ի վերջին նախաձեռնուած «Համահայկական Ազգային Համաձայնութիւն» հասարակական-քաղաքական շարժումի համահիմնադիրներէն: Շուրջ երկվեցեակ մը չվարկաբեկուած մտաւորականներու հետ միասին կ'աշխատէինք իրականացնել Հ. Ա. Հ.-ի հիմնական նպատակը՝ «Ազգային պետութիւն՝ ազգային գաղափարաբանութեամբ»: Ցաւօք, հիւանդութեան պատճառով, ան վերջին ամիսներուն չէր կրնար աշխոյժ մասնակցութիւն ունենալ Հ. Ա. Հ.ի բազմաբնոյթ գործունէութեան, սակայն հոգիով-սիրտով մեզի հետ էր:

Սամուէլ Կարապետեանի մահը այն կորուստներէն է, որու համար համոզուած կ'ըսենք՝ անփոխարինելի կորուստ:

Այսօր Սամուէլ Կարապետեանը մեզմէ կը հեռանայ, սակայն մարմնապէս միայն: Սամուէլին նմանները յաւերժի ճամբորդ են՝ զիրենք ծնած հայ ազգին նման:

Հայրենի հողը թեթեւ գայ վրա՛դ, սիրելի՛ ընկեր: Քեզ շա՛տ պիտի կարօտնանք...


Սգաւոր ընկերո՛՛

Գեորգ Եազըճեան, Երեւան, 27 Փետրուար 2020, գիշեր



## Գրական-Մշակութային

### ՍԱՐԻԿ ՍԵՒԱՏՍՅԻ «ՀԱՅՐԵՆԱՊԱՐԾԻ ԱՉՔԵՐՈՎ» ԳԻՐՔԻ ՇՆՈՐՀԱՀԱՆԴԵՍԸ՝ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ



Վերջերս Երեւանի մէջ տեղի ունեցաւ միջազգայնագետ, լրագրող, գրող Սարիկ Սեւատայի «Հայրենադարձի աչքերով» ժողովածուի շնորհահանդեսը: Գիրքը նախադէպը չունեցող աշխատութիւն է թե՛ իր բովադակութեամբ, թե՛ տեսակով: Գիրքին մէջ գետեղուած են 30 հայրենադարձի կեանքի պատմութիւնները, անոնց՝ Հայրենիք տեղափոխուելը, հետագայ գործունեութիւնը Հայաստանի մէջ:

Շուրջ 18 երկիրներէ ներգաղթած հայրենադարձները գործարար (պիզնէս) ոլորտէն են, հասարակական եւ մշակութային գործիչներ են: Գիրքի միտք բանին կամ հիմնական գաղափարը հայրենադարձութիւնը խրախուսելն է՝ կոչի իւրօրինակ ձեւով՝ 30 մարդկանց անձնական փորձի պատումով:

24-ամեայ երիտասարդի խօսքով՝ այս աշխատանքը միտուած է Սփիւռքին տեղեկացնելու եւ ներկայացնելու Հայաստանի պայմանները, դժուարութիւնները, որոնք շատ անհրաժեշտ են Սփիւռքի մէջ բնակուող այն հայերուն համար, որոնք կը փափաքին վերադառնալ Հայրենիք: Ապագային՝ գիրքը կ'առաքուի նաեւ Սփիւռքի հայկական համայնքներուն, ինչպէս նաեւ կը ծրագրուի զայն վերածել արեւմտահայերէնի:

## ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Եթէ բարին չկրես քու հոգւոյդ մէջ, ինչպէ՞ս կրնաս զայն գնահատել այլոց մէջ...Եթէ գեղեցիկը չկրես քու հոգւոյդ մէջ, ինչպէ՞ս կրնաս զայն գնահատել այլոց մէջ..., քանզի միշտ ալ քու գնահատած լուսաւորը ցոլքն է այն լոյսին զոր կը կրես քու հոգւոյդ մէջ:

.....

Եթէ կ'ուզենք Էապես բարեփոխուիլ որպէս ազգ ու հայոց երկիր, վերագտնել մեր նախնեաց հայկական խրոխտ իսկութիւնը, պիտի վերակազմակերպենք **ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱՎՈՒԹԻՒՆԸ**, օրօրոցէն մինչեւ չափահաս տարիքը եւ անկէ ետք ալ...արմատախիլ ընելու համար մեր հաւաքական եւ անհատական ԵՍ-ԷՆ ստրկամտութիւնը, կրաւորականութիւնը, գաւառամտութիւնը, օգտապաշտութիւնը....որոնք դուրսէն եկած եւ արմատ նետած են մեր Էութեան մէջ, գուցէ դարերու պետականազուրկ կեանքին որպէս արդիւնք: **ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱՎՈՒԹԻՒՆԸ** միտուած պիտի ըլլայ քաջալերելու, խթանելու՝ **ՈԳԻ ՅԱՆԴՐՆՈՒԹԻՒՆ**, **ԼԱՅՆԱԽՈՅՈՒԹԻՒՆ**, **ԱԶԱՏ ՄԻՏՔ**, **ՎԵՅԱՆՁՆՈՒԹԻՒՆ**, **ԱՐԴԱՐԱՍՏՈՒԹԻՒՆ**, **ԱՇԽԱՍԱՍԻՐՈՒԹԻՒՆ**, **ԱԶԳԱՅԻՆ ՏՈՅՄԻԿ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ**, որոնք մեզ ուղեկցեր են դար ու դարեր եւ բարոյական հիմքն են մեր գոյութեան եւ յարատեւման:

.....

Սերը հրաշքներ կրնայ գործել ազգին ու հայրենիքին համար, անխարդախ, անդաւաճան եւ անկեղծ Սերը...Որքան ճիշդ է ըսուած. «Ճշմարիտ սեր մերժէ զերկիւղ», ինչ որ կարելի է մեկնաբանել՝ ճշմարիտ սերը կը յաղթահարէ ամեն վախ ու փոքրոգութիւն, ես պիտի աւելցնեի՝ ամեն դժուարութիւն եւ խոչընդոտ...

.....

Մարդ կայ վտիտ մոմի լոյսով կրնայ ուրախանալ, մարդ ալ կայ որ լոյսերու ճառագայթին մէջ Նստած, կը տրտնջայ լոյսի պակասէն...ԼՈՅՍԸ պիտի մարդ ունենայ իր հոգւոյն մէջ, գերազանցօրէն, որպէսզի կարենայ **ԳՆԱՅԱՏԵԼ** եւ **ԱՐԺԵՒՈՐԵԼ** կեանքի այն ամենէն փոքր Նշոյլները լոյսի, որ կը մատուցուին ամեն մարդ Էակի....սակայն, աւա՛ղ, սակաւ են անոնք որ սորված են լոյսի այդ թէկուզ աննշան ճառանջով լուսաւորուիլ, այնպէս ինչպէս ուրախութիւն զգալ կեանքի ամենէն աննշան թուացող երեւոյթներու մէջ...





.....

ՅՈՂԵՂԵՆ հայրենիքը՝ առանց ՈԳԵՂԵՆ հայրենիքի, կը դառնայ հետզհետե սոսկ աշխարհագրական տարածք, բնակավայր, զուրկ հայկական ոգեղէնութենէն, որ կը կազմէ անոր բուն Էութիւնն ու ինքնութիւնը որպէս ՅԱՅՈՑ ԵՐԿԻՐ...Կարծես յատուկ ծրագրաւորուած աշխատանք կը տարուի՝ հեռուստատեսութեամբ, հրապարակային միջոցառումներով եւ գովազդային քարոզամեքենայով՝ իր բնիկ հարազատ մշակոյթէն օտարացնելու հայոց երկիրը, զայն դարձնելու կեղծ ու խորթ «արժեքներու» հանդիսավայր...ՅԱՅՐԵՆԻԶԸ ԻՐ ՅԱՅԵՑԻ ՆԿԱՐԱԳՐՈՎ, ՈԳԵՂԵՆՈՒԹԵԱՄԲ Է ՅԱՅՐԵՆԻԶ... Իւրաքանչիւր հայ պիտի պայքարի այս ուղղութեամբ, մերժելով այդ կեղծ «արժեքները» եւ իր ամէնօրեայ կեանքին մէջ աւելի ու աւելի տեղ տալով հայ բնիկ բառ ու բանին, երգ ու տաղին, հայ մշակոյթի համակարգին մաս կազմող բոլոր ձեռակերտ արուեստի գործերուն ալ...Ոգեղէն հայրենիքին նկատմամբ մեր վերաբերմունքէն կախեալ է հողեղէն հայրենիքի ապագան...

.....

ՅԱՐՄԱՐՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ...ահաւասիկ հայ հասարակութեան ախտերէն մէկը...Ծուղակ մը՝ ուր այնքան հեշտ ու դիւրին է իյնալ, յարմարիլ վերին իշխանութեանց եւ Էսթապլիշմենթին թելադրած ապրելակերպին, կարգ ու սարքին, արժեքներուն...եւ արժանանալ անոնց գնահատանքին, պարգեւած շքանշաններուն, կերակրատաշտէն օգտուելու հնարաւորութեան...Բայց յարմարող ու համակերպող ամբոխէն վեր, միշտ ալ քայլած են սակաւաթիւ այն լուսափայլ մտաւորականները, որոնք մերժած են իրենց պարտադրուած նման ստրկամիտ վարքն ու բարքը...պայքարած են անոր դէմ բարձրաճակատ...Չեն վարանած բարձրաձայնելու ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ...լուսաւոր ուղենիշ դառնալով ապրող ու յետագայ սերունդներուն...Մարդ Էակին միշտ ալ տրուած է ԸՆՏՐԵԼՈՒ հնարաւորութիւնը...ապրիլ ստրկամտօրէն ու յարմարիլ, կամ ապրիլ ներքին ազատութեամբ, սեփական խիղճին ականջալուր...Թէեւ երկրորդին պարագային, ան բարձր գին պէտք է վճարէ իր ընտրած ուղիին համար...

.....

ՕՏԱՐԱՑՈՒՄԸ ազգային ինքնութենէն ՍՏՐԿԱՄՏՈՒԹԵԱՆ մէկ արտայայտութիւն է, քանզի անիկա ուրիշ բան չէ, եթէ ոչ հրաժարիլ իր բուն Էութենէն եւ անձնատուր ըլլալ մէկ այլ ինքնութեան, կամայ թէ ակամայ, գիտութեամբ թէ անգիտութեամբ...Ինքզինք յարգող, արժանապատուութիւն ունեցող մարդը կը պայքարի կը ոգորի յանուն իր ԻՆՔՆՈՒԹԵԱՆ կենսունակ ՊԱՅՊԱՆՈՒՄԻՆ, կուլ չերթար օտարացնող հոսանքին, կը մաքառի յանուն իր ԱԶԱՏՈՒԹԵԱՆ...Զանի՛ քանի «ղեկավարներ», բարբառելով ազատութեան ընձեռած հնարաւորութեանց եւ բարիքներուն մասին, կամովին ընդ առաջ կ'երթան գերութեան շղթաներուն, քաղքենիութեան հմայքներուն անձնատուր...միաժամանակ բարձրագոյ աղաղակելով, որ «հայոց լեզուի իմացութիւնը կարելոր չէ հայ ըլլալու համար»...

.....

Շատ հազուագիւտ են այն անձերը, որոնք գիտեն գնահատել ուրիշին բարի, ազգանուէր գործը, քաջալերել զայն, արժեւորել ի գործ դրուած հոգէնուէր աշխատանքը, զոհողութիւնը...Շատ-շատեր գիտեն միայն բարձրագոյ եւ բարձրաղաղակ խօսիլ, բարբառել ազնութեան մասին...ազգասիրութեան մասին, հայրենասիրութեան մասին, ուրիշինը անտեսել,



արհամարհել, նոյնիսկ սեւցնել...Ահա թէ ինչու հայ կեանքը կը հեւայ, կը հեւայ, կը հեւայ....ՇՆՉԱՍՊԱՌ

.....

Ազգերու կեանքին մէջ, չկան դիւրին լուծումներ....քանզի դիւրին լուծումները կ'երթադրեն շատ յաճախ մտքի մակերեսայնութիւն, հոգիի ծուլութիւն եւ ոգիի տկարութիւն ....որոնց ծուղակին մէջ կը յայտնուին ազգի մը զաւակները, երբ կորսնցուցած են՝ ազատ եւ գեղեցիկ, ազատ եւ խրոխտ, ազատ եւ արժանապատիւ ապրելու ճաշակը եւ անձնատուր են եղած նիւթի յղփանքին եւ սին ու գռեհիկ վայելքներու հոսանքին...

.....

Անցնող ժամանակին հետ, զգացումներու խելայեղ պոռթկումը հետզհետէ տեղի կու տայ ՍԹԱՓ ԲԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ, փոթորկայոյզ ջուրերը կը խաղաղուին, կը զուլալուին եւ տակաւ յստակ կ'երեւին փրփուրներուն տակ թաքնուած մարգարիտները՝ խոհի, մտքի, յոյզի....Փոթորիկին բերածը փոթորիկին հետ կ'երթայ անհետ, երբեմն ալ ծանր աւերներ ձգելով իր ետին, կը մնան ճշմարիտը, անկեղծը, իրաւը, գեղեցիկը....որոնք չեն կորսնցներ իրենց հմայքն ու հրապոյրը անցնող ժամանակին հետ....Ընդհակառակն, անոնց իրաւ արժէքը կը վերիմաստաւորուի դարե դար...

.....

Յոգեւոր-բարոյական-ընկերային, քաղաքակրթական ճԳՆԱԺԱՄ Է ամենուրեք, տակաւին՝ տնտեսական-քաղաքական ալ...: Ո՞ր հասաւ մեր այս հի՛ն-հի՛ն աշխարհը՝ արհեստագիտական սրաթռչ նուաճումներէն ետք: ճԳՆԱԺԱՄ Է մարդ Էակին սրտին մէջ, հոգիին մէջ....քանզի ան երբեք չկրցաւ ներդաշնակել իր սիրտը, միտքն ու հոգին մեծն բնութեան հետ, անոր անխախտ օրէնքներուն հետ..., գուցէ կարծելով թէ իր գիտական-արհեստագիտական մտքով՝ պիտի կարենար տիեզերքը նուաճել...: Գոռոզամիտ եւ ամբարտաւան իր այս վարքագիծով, ան տակաւ հեռացաւ այն արժէքներէն, որոնք բուն նպատակն են իր գոյութեան՝ այս աշխարհիս երեսին, եւ դարձաւ ստրուկը ընչաքաղցութեան, մակերեսային հաճոյքներու, բարօր եւ աւելի բարօր ապրելակերպի, որոնք սահման չունին, եւ Էապէս ոչինչ կու տան ներաշխարհիդ հարստացման, գիտակցութեանդ խորացման, մտահորիզոնիդ ընդլայնման....Կ'արժէ՞ կեանք մը ամբողջ ապրիլ՝ միայն ապրելու համար, հաճոյքներ եւ բարօրութիւն վայելելու համար միայն եւ մնալ Էապէս աղքատ հոգիով, միտքով եւ սիրտով...

.....

ԽԱՌՆԻՃԱՂԱՆՃ....Մեր դարուն յատուկ իրավիճակ է կարծէք սա: Լրատուամիջոցները, գովազդը, ազատութեան եւ մարդկային իրաւանց անունով խօսող տեսակ-տեսակ կազմակերպութիւնները՝ խօսքը մէկ ըրած, կը ստեղծեն արժէքներու, եզրոյթներու, կարծիքներու այնպիսի խառնաշփոթ մը, որպէսզի մարդ Էակին գիտակցութիւնը մնայ քառասային վիճակի մը մէջ, չկարենայ տարանջատել ճշմարիտը՝ սուտէն ու կեղծիքէն, ճիշդը՝ սխալէն, չկարենայ խորանալ ներկայացուած խնդիրներու բուն էութեան մէջ....:

Այն տպաւորութիւնը կը ստեղծուի, որ մարդկային գիտակցութիւնը՝ կարծէք դիտաւորեալ կերպով, կը կառավարուի անտեսանելի ոյժերու կողմէ, կը դառնայ ձեռնավարելի, ըստ անոնց կամայականութիւններուն, Էապէս կորսնցնելով իր ազատութիւնն ու անկախութիւնը...:



---

Իրերու այս վիճակը հակակշռելու համար, անչափ կարեւոր է որ մեր կրթական համակարգը խթանէ՝ ազատ եւ անկախ մտածելու կարողութիւնը, ինքնուրոյն դատելու, հարցերը քննարկելու, վերլուծելու վարժութիւնը...ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ԴԱՐՁԵՐ Է ՅՐԱՏԱՊ ԽՆԴԻՐ ստեղծուած այս ԽԱՌՆԻՃԱՂԱՆՃԻՆ մեջ...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## ՔԱՌԵԱԿՆԵՐ

### ՔԱՌԵԱԿՆԵՐ



Ի՛նչ դիւրին է մարդ դատելը,  
Այպանելն ու ստորնացնելը,  
Որքա՛ն դժուար՝ հասկընալը,  
Մտածելն ու վերլուծելը...

.....

Անչա՛փ, այնքա՛ն անկեղծացայ  
Յոգիով մերկ ու թափանցիկ,  
Որ մարդիկ գիտենդ կարծեցին,  
Կամ ալ՝ հանճար մը սայթաքած...

.....

Թէ սիրտդ, հոգիդ չհրավառին  
Ներքին այրումով մը բորբ, տենդավառ,  
Չես կրնար երբե՛ք դուն ճշրագ դառնալ  
Ու երկնել տողեր արեգակնածին..

.....



Գիրդ պիտ'հոսի անձրեւի նման  
Սրտիդ կուտակուած թախիծի ամպէն,  
Բառերդ շի՛թ-շի՛թ արտասուքի պէս  
Չուլալէն սիրտդ, պայծառացնեն զայն...

.....

Չիս մի՛ դատէք խօսքով թերթել,  
Գիրս սրտիս լաւան է բարկ,  
Թէ չհաւնիք, մի՛ կարդաք զայն,  
Ո՞վ ձեր կարծիքն է հարցուցեր...

.....

Ձեր քսու խօսքով ինձ չմօտենա՛ք,  
Ձեր աչքն մաքրեցէ՛ք ժանգ ու փոշիէն,  
Նախքան որ նայիք շողին արփաւէտ,  
Կարենաք տեսնել յստակ ու պայծառ..

.....

Բիւր բիւր սիրտեր երբ կը միանան  
Շաղախով մը գերեկրային,  
Կրնան անյաղթ պատուար ըլլալ  
Չարին դիմաց գեղենային..

.....

Ամբոխն կրնայ քեզ բարձրացնել աստղերն ի վեր լոյս երկնքին,  
Նոյն ամբոխը կրնայ գլորել անդունդն ի վար խաւար վիհին,  
Բայց արժէքը իրաւ ու ճիշդ վեր բարձրանայ գերանհունին,  
Մինչ ամբոխը կոյր ու տգէտ մնայ միշտ ալ կպած գետնին...

.....

Մարդիկ կան լոյս ճառագայթեն  
Աչքերուն մէջ, հայեացքին մէջ,



---

Խօսք ու գրոյցին ու գիրին մէջ,

Մթնոլորտը լուսաւորեն...

.....

Թէ կարենաս վեր բարձրանալ մանրութիւնէն, հաշիւներէն,

Ըմպել մաքուր լազուրն երկնի, լուսատոչոր եւ լուսահեւ,

Յայնժամ քեզ է աշխարհն համակ` իր գանձերով հոգեհմայ,

Եւ մանաւանդ ազատ մարդ ես` ոգիովդ յաւերժագնայ...

.....

Ես իմ տերը եղայ միշտ ալ`

Ազատ, անկախ ու անվճար,

Խիղճիս միայն հաշիւ տուի,

Մնացեալը անտեսեցի...

.....

Քանի տաղեր ալ դեռ երկնեմ,

Չերկնած տաղիս կարօտ մնամ,

Ան կը պահէ երագս վառ,

Ոգիս արթուն, անթեւաբեկ...

.....

Սիրոյ միայն կը մերձենանք,

Ճաշակն անոր կ'ըմպենք միայն,

Քանզի սերը բացարձակն է,

Որուն ձգտինք յար յաւիտեան...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ